Վարչապետի պաշտոնում՝ պրոադրբեջանական Փաշինյանը, ԱԺ նախագահի պաշտոնում՝ թուրքական դրածո, որն ամեն պահի կարող է սպառնալիք լինել Փաշինյանի պաշտոնի համար: Չնայած կարող է ոչինչ էլ չլինել, ուղղակի Էրդողանը եւ Ալիեւը որոշել են եղբայրաբար իրար մեջ բաժանել Հայաստանը կամ՝ առայժմ Հայաստանի իշխանությունը:

Կարդացեք՝ էջ 5



«Հրազդանմաշը» հսկա գիգանտ էր. մինչեւ 1991-1992 թթ. ուներ 8000 աշխատող: 1998-ին այն սեփականաշնորհվել է, կազմավորվել են մի քանի կազմակերպություններ: Ապա Հրազդանի հսկան սնանկ ճանաչվեց եւ, ինչպես ժողովուրդն է ասում՝ թալանվեց: Փոխանակ այս գործարանները կարգի բերեն, գործող գործարանն են տիրոջից խլում:

Կարդացեք՝ էջ 6

Երեխաներին հանել-գցել են քուչեքը, մարզվելու տեղ չունեն, որ պատրաստվեն մրցումների: Ի՞նչ է անում այս պետությունը: Մարդկանց հետ անձնական հարցեր ունեն, Օլիմպվանն են փակում: 1-2 օր արել եք ձեր գործը, դուրս եք եկել: Տպավորությունն է, որ վարչապետը չի ուզում, որ հայկական դրոշը բարձրացնեն այլ երկրներում:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 119 (4254), 17 հուլիս, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Չնայած Դոնթի բանաձեւով ԱԺ հանձնաժողովներից մի քանիսի նախագահությունն անցնում է ընդդիմադիրներին՝ եթե 12 հանձնաժողով ձեւավորվի, 3-ի նախագահներին պետք է նշանակի «Ուժեղ Հայաստանը», սակայն ՔՊ-ականները նախագահի թեկնածություններ են առաջադրել բոլոր 12 -ի համար էլ: Բայց առաջադրումների պատկերից հասկանալ է, որ պատրաստ են մի քանիսը զիջել ընդդիմադիրներին: Օրինակ, Բաբկեն Թունյանը, որն անցած ԱԺ-ում ղեկավարում էր տնտեսական հանձնաժողովը, առաջադրվել է ոչ միայն տնտեսականի նախագահի համար, այլեւ՝ ֆինանսավարկային ու բյուջետայինի, որը ղեկավարում էր Ծովինար Վարդանյանը՝ նա էլ է հայտ ներկայացրել: Սա նշանակում է, որ իշխանությունը հակված է այս 2 հանձնաժողովներից մեկը տալ ընդդիմությանը: Երկրորդ «հանձնվելիք» հանձնաժողովը, թերեւս, կլինի տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հանձնաժողովը, որտեղ թեկնածություն են առաջադրել Հասմիկ Հակոբյանն ու Տրդատ Սարգսյանը: Հ. Հակոբյանը նաեւ մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահի համար է առաջադրվել, Տրդատ Սարգսյանը՝ առողջապահության: Իսկ երրորդ զիջվողը կլինի մարդու իրավունքների հանձնաժողովը, որը բոլոր ժամանակներում ընդդիմության ներկայացուցիչն է ղեկավարել:

Մինչ իշխանությունը Փաշինյանի գլխավորությամբ կենաց-մահու պայքար է մղում Գյումրին ուզուրպացնելու համար, տեղի իշխանությունների ու գործընկերների միջեւ անջրպետը խորանում է: Մեզ ասացին, որ կալանավորված Վարդան Ղուկասյանի փեսան՝ Ավետիս Առաքելյանը, որը, լինելով քաղաքապետի առաջին տեղակալ, փոխարինում է Ղուկասյանին, գործընկեր կուսակցություններին մինչ այս պահը չի տեղեկացրել՝ գնո՞ւմ է խորհրդարան, թե՞ շարունակելու է փոխքաղաքապետ աշխատել: Գործընկերները վիրավորված են այս վերաբերմունքից, հատկապես որ պարզ էլ չէ, թե Առաքելյանի հրաժարականից հետո ով է փոխարինելու նրան: Ասում են՝ Ղուկասյանի թիմում չկա մեկը, որը կարող է ձգել այդ պաշտոնին եւ ընդունելի լինել ընդդիմության համար: «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Կարեն Սիմոնյանին էլ քրեական վարույթով կարող են հարմար պահի չեզոքացնել: Իսկ իշխանությունը հույս ունի, որ Առաքելյանի հեռանալուց հետո փոխարինող չեն ընտրի, եւ համայնքապետի ԺՊ կնշանակեն, որովհետեւ կարծես ձախողվում է նիստերը տապալելու միջոցով ավագանին լուծարելու եւ արտահերթ ընտրությունների գնալու պլանը: Իսկ եթե՝ ոչ, ապա խոսում են, որ Գյումրին կարող են խոշորացնել, մեկ նոր համայնք միացնել, որ ընտրություն անցկացնեն:

Նոր մշակույթ

Մեզ հարկավոր են նոր որակի, նոր մտածողության գործիչներ: Այս փակուղին կարող է հաղթահարվել միայն ալգորիթմների փոփոխությամբ, ոչ ստանդարտ քայլերով, անսպասելի լուծումներով: Եվ քանի որ, այս իշխանության հանդեպ վստահության ռեսուրսն ամբողջությամբ սպառվել է, պարզ է, որ սրանք վերափոխման այլեւս ենթակա չեն, ուստի ոչ մի լավ բան այլեւս նրանցից չենք ակնկալում: Միայն մի ակնկալիք է մնացել, որ իրենց մեջ ուժ գտնեն ու հեռանան, դաշտն ազատեն՝ նոր մարդկանց, նոր ուժերի, նոր կառավարության համար, որ երկիրը սկսի ապրել: Բայց նոր ուժն ու նոր մարդիկ էլ պետք է կարողանան հավատ ներշնչել իրենց հանդեպ, ապացուցել, որ իրենք նոր են, լավն են, ունակ են երկիրը կառավարելու: Այն, որ հունիսի 7-ին ընդդիմադիր ուժերը ջախջախիչ հաղթանակ չտարան նաեւ այս պատճառով էր՝ մարդիկ չհավատացին նրանց պոտենցիալին ու խոստումներին: Մտածեցին, որ այս անգամ էլ են խաբվելու, ուրեմն թող մնա նա, ով իրենց հույսերն ի դերեւ է արել, ապացուցել է, որ անընդունակ է ու ապաշնորհ է, նրա հետ այլեւս ոչ մեկը, անգամ իր թիմը, հույսեր չի կապում: Նոր հիասթափությունների ռեսուրս այս հասարակությունը չունի, չի ուզում նորից սիրել ու կրկին հուսախաբ լինել: Եվ ես ուրախ եմ, որ նորահայտ ուժի՝ «Ուժեղ Հայաստանի» մոտ ընտրություններից հետո երկրորդ շնչառություն է բացվել: Նրանք շարունակում են այցելել մարզեր, հանդիպել մարդկանց հետ: Սա նոր մշակույթ է ձեւավորում՝ ընտրություններից հետո շարքային քաղաքացուն մոռացող իշխանությանն ու ընդդիմությանը եկել են փոխարինելու նոր մարդիկ, որոնք չեն հրաժարվում իրենց պատասխանատվությունից, չեմ մոռանում մարդուն: Անգամ ստվերային կառավարության դեր են ստանձնում՝ նախընտրական խոստումներն իրենց ձայն տված համայնքների համար իրականացնելով:

Հունիսի 30-ին Նիկոլ Փաշինյանն ընդունել էր Վրաստանի ներքին գործերի նախարար Սուլխան Թամազաշվիլուն: Վրացի պաշտոնյան վարչապետին մի շարք խորհրդանշական նվերներ է հանձնել: Նվիրել է Ցիլա Ցալկալամանիձեի հեղինակած՝ կլուազոնե տեխնիկայով էմալապատ նկար՝ 350 հազար 959 դրամ արժեքով եւ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմը: Գրքի կազմը՝ պղնձից, պատված 998 հարգի արծաթով՝ 0.03 մմ հաստությամբ, այնուհետեւ՝ 999.9 հարգի ոսկով՝ նույն՝ 0.03 մմ հաստությամբ: Արժեքը 113 հազար 100 դրամ: «Ընձենավորը» համաշխարհային գրականության դասական ստեղծագործություններից է, որի առանցքային գաղափարներն են ընկերությունը, հավատարմությունը, սերը, արժանապատվությունն ու քաջությունը: Վերջին շրջանում ընթերցանության մասին հաճախ հրապարակային գրառումներ անող եւ հերթական ընթերցած գրքի մասին հանրությանը տեղեկացնող Նիկոլ Փաշինյանի գրադարանում այս ստեղծագործության հայտնվելը պատահական չէ, մնում է ակնկալել, որ նա ոչ միայն կընթերցի, այլեւ կխորհի այն արժեքների շուրջ, որոնք ներկայացված են Ռուսթավելու հայտնի պոեմում:

ՈՄԱՆՔ ՈՒՐԱԽ ԵՆ, ՈՄԱՆՔ՝ ՀԻԱՍԹԱՓՎԱԾ

Պետական շարքային ծառայողները հերթական հիասթափությունն են ապրել իշխանության կողմից օգտագործվելու եւ չվարձատրվելու կապակցությամբ: Մեզ ասացին, որ հունիսի 7-ի ընտրություններից առաջ պետական ծառայողների մեծ մասին պարտադրել են լծվել իշխանության քարոզչությանը եւ աշխատել իշխող ուժի համար՝ խոստանալով, որ ընտրություններից հետո մեծ անակնկալ են ստանալու դրա դիմաց: Խոսքն ընթացիկ հավելավճարների ու պարգեւավճարների մասին չէ, այլ հենց ընտրությունների համար արված աշխատանքի դիմաց կլորիկ պրեմիայի: Սակայն ընտրություններից հետո խոստացած անակնկալը «գրել են սառուցին», երբ որոշները հետաքրքրվել են ու պահանջել խոստացված անակնկալը, նրանց ասել են, որ չենք կարող բոլորին տալ՝ աղմուկ կբարձրանա: Ապա ում պետք է, խրախուսել են, մեծամասնությանն էլ դասական ձեւով «քցել»: Երեկ տեղեկացանք, որ ՀՀ կառավարությունը 5 մլրդ դրամ է հատկացրել՝ հայտնի պիլոտային ծրագրի շրջանակներում ղեկավար կազմերին միլիոնանոց պրեմիաներ վճարելու համար: Հիշեցնենք, որ մի անգամ վճարել են 25-ի դեկտեմբերին, ապա կես տարի չեն վճարել, որ ընտրություններից առաջ մարդկանց չզայրացնեն, հիմա նորից սկսել են վճարել:

ՄԻՋԱՆՑՔ

ԹՐԱՄՓԻ ԲՈԼՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ ՆՈՒՅՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ՝ ՍՈԿՈԼՈՎԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ՉԷ

Ադրբեջանը Թուրքիային ու Նախիջեւանին կապող TRIPP միջանցքը TRIPP + առեւտրային հիմնադրամն է իրականացնելու, որը ղեկավարելու է ԽՍՀՄ-ում ծնված, Չիկագո տեղափոխված ամերիկացի ներդրող, ազգությամբ հրեա Կոնստանտին Սոկոլովը: ԱՄՆ Պետդեպարտամենտը հաստատել է այս տեղեկությունը:

«Չիկագոյում մասնավոր կապիտալի ներդրող Կոնստանտին Սոկոլովը կնախագահի Պետդեպարտամենտի նոր ձեռնարկատիրական հիմնադրամը, որը կվերահսկի Կենտրոնական Ասիայի առեւտրային միջանցքի համար նախատեսված ավելի քան 200 միլիոն դոլարը, ներառյալ՝ տրանսպորտային, էներգետիկ ենթակառուցվածքների ու կարեւորագույն հանքանյութերի ոլորտներում ներդրումները»: Սոկոլովը պետական պաշտոններ չի զբաղեցրել, նա մեկն է այն 36 նվիրատուներից, ովքեր ֆինանսական միջոցներ են հատկացրել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի քարոզարշավին եւ Սպիտակ տան պարահանդեսային շքեղ դահլիճի նորոգմանը, որը գնահատվում է 350 մլն դոլար: Բայց Կոնստանտին Սոկոլովի նվիրատվության չափը հայտնի չէ:

TRIPP + առեւտրային հիմնադրամը, որը նախագահելու է Սոկոլովը, ըստ Պետդեպի, կառավարելու է 201 միլիոն դոլարանոց բյուջե եւ լիազորված է տրամադրել վարկեր, դրամաշնորհներ, ներդրումներ անել Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում ու Կենտրոնական Ասիայում՝ մասնավոր հատվածի ռազմավարական զարգացման համար: Փետրվարին Երեւան կատարած այցի ժամանակ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը TRIPP + հիմնադրամը որակել էր որպես «պատմական վերափոխման» մի մաս, որը «կբացի առեւտրի, տարանցման եւ էներգետիկ հոսքերի միանգամայն նոր աշխարհ»: Միեւնույն ժամանակ, ըստ The Guardian-ի, «հստակ չէ, թե ինչպես կարող են Սոկոլովը կամ ԱՄՆ-ն շահույթ ստանալ հիմնադրամից եւ արդյոք ստանալու են փոխհատուցում իրենց դերակատարման համար»: Սոկոլովը Հայաստանում հայտնի է որպես հայաստանյան կապի խոշոր օպերատորներից «Վիվա Արմենիա»-ի համասեփականատեր: «Վիվա Արմենիա»-ն վերջերս ձեռք էր բերել նաեւ մեկ այլ օպերատորի՝ «Ռոստելեկոմ»-ի բաժնետոմսերը:

Ապրիլին գրվել էր, որ վերջինս նաեւ Թեղուտի պղինձ-մոլիբդենի հանքավայրի հնարավոր գնորդն է: Սոկոլովը պաշտոն է զբաղեցնում Northern Pillar Energy կոնսորցիումում, որը մաքուր էներգիայի ու օպտիկամանրաթելային մալուխների հաղորդակցությամբ է զբաղվում՝ կապելով Աֆրիկան Եվրոպային: Չիկագոյում գործող IJS Investments-ի հիմնադիրն է, հիմնադիր է նաեւ Ցյուրիխում գործող Gotthard Investment AG-ում. այս ընկերությունը կենտրոնացած է ֆինանսական ծառայությունների մատուցման, էներգետիկայի ու անշարժ գույքի ոլորտներում: Պետքարտուղարության խոսնակը վստահեցրել է, որ հիմնադրամը գործելու է ամերիկյան օրենսդրության պահանջներին համապատասխան՝ տարեկան հաշվետվությունների, անկախ աուդիտների, ինչպես նաեւ դրամաշնորհների տրամադրման հարցերում՝ շահերի բախման պահանջներին հետեւելով:

Արտակարգ եւ լիազոր դեսպան, ԳԽ պատգամավոր **Արմեն Մարտիրոսյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով այս նշանակման մասին, ասում է. «Կարծում եմ, որ այստեղ կոնսպիրոլոգիայի կարիք չկա: Հայտնի է, որ նա ծնվել եւ սովորել է Ռուսաստանում, 21 տարեկանում մեկնել է ԱՄՆ: Որեւէ լուրջ կապերից ես տեղյակ չեմ: Նա մասնագիտությամբ մաթեմատիկոս է, հետեւաբար՝ տրամաբանող մարդ է, ԱՄՆ-ում ներդրումներով է զբաղվել: Ունի ուղիղ կապ Թրամփի հետ: Գրում են, որ մոտ 100 միլիոն դոլարի օժանդակություններ ու ներդրում է արել ԱՄՆ նախագահի տարբեր ձեռնարկներում: Նա լուրջ ներդրող է իրականում: Գիտի լեզուներ եւ ծանոթ է տարածաշրջանի ժողովուրդների մշակույթներին: TRIPP + առեւտրային հիմնադրամը չի վերաբերում միայն Հայաստանին, Ադրբեջանին եւ Թուրքիային, այն նաեւ Միջին Ասիայի համար է: Կարծում եմ, որ նշանակումը համահունչ է Թրամփի կադրային քաղաքականության տրամաբանությանը, որը պարտադիր ենթադրում է անձնական նվիրվածություն: Այս կտրվածքով պետք է նայել Թրամփի բոլոր նշանակումները, եւ Սոկոլովի նշանակումը բացառություն չէ: Ինձ միշտ զարմացրել է հայաստանյան ընդդիմության ժխտողականությունը TRIPP-ի հանդեպ: Նրանք, կարծես, խուսափում են այդ կարեւոր նախագծի վերաբերյալ համապարփակ գնահատական տալուց: ՀՀ կառավարությունն ԱՄՆ-ի հետ համաձայնագիր է կնքել, այն հետեւողականորեն առաջ է տանում, դա լուրջ աշխարհաքաղաքական կոնցեպցիա է եւ տարածաշրջանում լուրջ փոփոխություններ է բերելու:

Ես դժվարանում եմ ասել, թե ինչ ազդեցություն եւ կապեր ունի Սոկոլովը ՌԴ-ում: Սակայն կարծում եմ, որ ՌԴ-ն պետք է արդյունավետ դիվանագիտական ջանքեր գործադրի՝ այս հարթության վրա իր հետաքրքրությունները հնարավորինս ամրագրելու համար: Երկաթուղային մասը դեռեւս գտնվում է Ռուսաստանի հսկողության տակ, եթե հին երկաթգիծն օգտագործվելու է, ապա ռուսական գործոնը կարեւոր է, թեպետ ամերիկացիները հայտարարել էին, որ նպատակը Ռուսաստանին եւ Չինաստանին իզոլացնելն է: Մինչդեռ ռուսական կողմի իրական դիրքորոշումն անհասկանալի է, նրանք եւս հակված են ժխտել TRIPP-ը՝ պնդելով, որ այն սոսկ քաղաքական նախագիծ է: Այո, քաղաքական է, եւ ինչ:

Չեմ ցանկանա, որ Հայաստանը հայտնվի խոշոր տերությունների աշխարհաքաղաքական մրցակցության կիզակետում՝ դրանից բխող քաղաքական, տնտեսական եւ անվտանգային ռիսկերով: Այս տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի ձեւավորել համագործակցության այնպիսի ձեւաչափ եւ մեխանիզմներ, որոնք ինչ-որ չափով հաշվի կառնեին նաեւ Ռուսաստանի, Չինաստանի եւ Իրանի շահերը: Ներառական մոտեցումը կարող է նվազեցնել նախագծի աշխարհաքաղաքական բեւեռացման ներուժը եւ այն վերածել ոչ բացառապես մրցակցային բաժանարար նոր գծի, այլ տարածաշրջանային փոխկապակցվածությունը լրացնող եւ տարբեր շահերը համադրող ենթակառուցվածքային նախաձեռնության:

Նախագիծն ունի ներուժ՝ լուրջ կերպով ազդելու Հարավային Կովկասի ռեգիոնալիզացիայի վրա: Հայաստանի համար TRIPP-ը շատ ավելին է, քան երթուղիների եւ կոմունիկացիաների դիվերսիֆիկացման հնարավորությունը. այն վերաբերում է երկրի կարողությանը՝ ընդլայնելու իր արտաքին քաղաքական եւ տնտեսական մանեւրելու կարողությունը՝ առանց նոր հնարավորությունները լրացուցիչ կախվածությունների վերածելու: Այս առումով տարածաշրջանային կապակցվածության նոր ճարտարապետության ձեւավորումը դառնում է քաղաքական կարեւոր փորձություն՝ պայմանավորելով ինչպես Հայաստանի ինքնիշխանության պահպանման հրամայականը, այնպես էլ մեր երկրի տեղն ու դերը՝ Հարավային Կովկասում ձեւավորվող տարածաշրջանային կարգում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«ՄՈՒԼՏԻ ՎԵԼՆԵՍԸ» ՄԻՆՉԵՎ 2065 ԹՎԸ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՈՒՆԵՐ

Կալանքի տակ գտնվող «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանին եւ նրա ընտանիքին պատկանող «Մուլտի Վելնես» մարզաառողջարարական համալիրն ուզում են պետականացնել, քանի որ Նիկոլ Փաշինյանը նախընտրական փուլում խոստացել է ունեզրկել ընդդիմության 3 առաջնորդներին: Ալեք Մանուկյան 11 հասցեում գտնվող համալիրի գույքն արդեն փոխանցվել է Երեւանի քաղաքապետարանին, գործընթացի մասին ընկերությունը ծանուցվել է ընտրություններից օրեր անց: Պարզվում է՝ քաղաքապետարանը միակողմանիորեն խզել է պայմանագիրը, եւ չի հասկացվում, թե որն է պայմանագիրը խզելու օրինական հիմքը:

«Երեւանի քաղաքապետարանի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցագիր են ստացել: Այդ տարածքը վարձակալությամբ է տրված «Մուլտի գրուպ» կոնցեռնին՝ մինչեւ 2065 թվականը, եւ առանց որեւէ հիմավորում ներկայացնելու, Երեւանի քաղաքապետարանն այսպես, սեփական քմահաճույքով, որոշել է միակողմանի լուծել պայմանագիրը՝ մեկ ամիս շուտ այդ մասին տեղեկացնելով «Մուլտի գրուպ» կոնցեռնին»,- շուրջ մեկ ամիս առաջ լրագրողների հետ զրույցում ասել էր ԲՀԿ մամուլի խոսնակ Իվետա Տոնոյանը:

Համալիրը, հիշեցնենք, արդեն 10 օր է՝ փակ է, կապարակնքված են գլխավոր մուտքի դուռն ու սենյակները, խուզարկությունից հետո անորոշ ժամանակով այն փակվել է, եւ անգամ աշխատակիցների ու հաճախորդների բողոքները որեւէ արդյունքի չեն հանգեցրել: Քննչական գործողություններից հետո Պետական եկամուտների կոմիտեն տեսանյութ էր հրապարակել, թե բացահայտվել է 2,6 մլրդ դրամի թաքցված շրջանառություն: Չնայած ընդամենը կես տարի առաջ Ծառուկյանին պատկանող բոլոր ընկերություններում մեծածավալ ստուգումներ էին իրականացվել, եւ որեւէ խախտում չէր հայտնաբերվել:

«Մուլտի Վելնես» մարզասրահի գլխավոր տնօրեն **Արման Փիրոյանը** «Հրապարակ»-ի հետ զրուցում ասաց, որ մարզասրահի պայմանագիրը կնքվել է 49 տարով՝ մինչեւ 2065 թվականը. «Ոչ մի այդպիսի բան չի կարա լինի, դա ուղղակի աբսուրդային բան է՝ ոչ օրինական թուղթ կա, ոչ մի բան չկա, «Մուլտի Վելնես»-ն էլ վարձակալության հիմունքով մինչեւ 2065 թիվը պայմանագիր ունի: Ես չգիտեմ՝ հիմա Հայաստանում ինչ է կատարվում, Հայաստանում ինչի իրավունք կա, ինչի՝ չկա, բայց նման բան չի կարող լինել: Սկզբից 100 տարով է եղել, հետո պայմանագիրը վերջնական կնքվել է մինչեւ 2065 թիվը»:

- Քաղաքապետարանից եկել են ձեզ մոտ, այդ հարցով խոսել են:

- Ոչ, ոչ, ոչ մեկը չի խոսել, այս պահին համալիրը չի աշխատում, հուսով ենք՝ շուտով կբացվի:

- Գիտեմ, որ կենտրոնի տեխնիկան, լողավազանները փչանալու ռիսկի տակ են, թույլ տրվեց գնալ, ստուգել, սարքերն անջատել:

- Մենք սպասում ենք քլորի քիմիային, որպեսզի կարողանանք գնանք, նորից լցնենք, որ անգարի ջուրը չվնասվի: Երեւի վաղը կամ մյուս օրը կգա քլորը, կբացեն, կմտնենք:

- Աշխատեցնելու հետ կապված՝ որեւէ մարմնից արձագանք չկա՞:

- Միջնորդություն տարվել է, ամեն դեպքում, բոլորն էլ գիտեն՝ իրավունք չկար փակելու: Սպասում ենք:

- Ձեզ կանչե՞լ են հարցաքննության:

- Անձնական գույքի, անձնական իրերի հետ կապված կանչել են, մի անգամ գնացել եմ, սպասում եմ՝ էլի կանչեն:

- Հարցաքննությունների ժամանակ հարկերի հետ կապվա՞ծ են Ձեզ հարցնում:

- Հարկերի հետ կապված մենք շատ վաղուց ենք հարցերի պատասխանել, հարկերի հետ կապված խնդիր չկա, քննություն գնում է դեռ, էս սոցցանցերը չարիք են դարձել, մի ինֆորմացիա են վերցնում, պտտացնում, չես էլ ուզում պատասխանել:

- Իսկ Ձեր անձնական իրերն ինչո՞ւ են տարել, դրանց շրջանակում ի՞նչ են Ձեզ հարցրել:

- Իրենք թվային խուզարկություններ են անում, ամեն ինչ նորմալ լինելու դեպքում պետք է որ հետ տան:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Հ1-ը վրե՞ժ է լուծում իր նախկին աշխատողից

Հանրային հեռուստաընկերությունում չեն ներել հեռուստահաղորդավար Արտյոմ Կարապետյանի՝ Հ1-ը լքելու եւ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի մամուլի քարտուղարի պաշտոնը ստանձնելու որոշումը: Նա փետրվարի սկզբին նշանակվեց Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար: Հենց այդ օրվանից էլ Հանրային հեռուստաընկերությունը դադարեցրել է Երեւանի քաղաքապետարանի գործունեության լուսաբանումը: Մեզ հետ զրույցում **Արտյոմ Կարապետյանը** նշեց, որ չի ուզում դա միանշանակ կապել իր աշխատանքի փոփոխության հետ եւ չի կարծում, թե ամեն ինչ պայմանավորված է իր անձով: Նրա խոսքով՝ նախկին գործընկերների հետ անձնական հարաբերությունները պահպանվել են, հնարավոր է, որ պարզապես համընկել է: Հարցին, իր՝ Հ1-ում աշխատելու ժամանակահատվածում որքա՞ն հաճախ էր հեռուստաընկերությունը լուսաբանում Երեւանի քաղաքապետարանի աշխատանքը, եւ իր՝ մամուլի քարտուղար նշանակվելուց հետո հեռուստաընկերությունից երբեւէ դիմե՞լ են քաղաքապետարանի կամ քաղաքապետի գործունեությանը վերաբերող նյութեր պատրաստելու հարցով, Կարապետյանը պատասխանեց. «Նախկինում գրեթե ամենօրյա ռեժիմով լուսաբանումներ էին իրականացվում, հրապարակվում էին նաեւ պաշտոնական հաղորդագրությունները: Իսկ իմ՝ մամուլի քարտուղար նշանակվելուց հետո արդեն գրեթե վեց ամիս է անցել, եւ հեռուստաընկերությունից որեւէ զանգ չեմ ստացել: Նկատել եմ, որ քաղաքապետարանի գործունեությանը գրեթե անդրադարձ չի կատարվում, թեեւ, կրկնում եմ՝ ես հակված չեմ դա կապել իմ՝ Հ1-ից հեռանալու եւ այստեղ աշխատանքի անցնելու հետ»: Մենք կապվեցինք նաեւ Հանրային հեռուստաընկերության տնօրեն **Հովհաննես Մովսիսյանի** հետ, սակայն նա չցանկացավ պատասխանել հարցին, առաջարկեց հարցը գրավոր ուղարկել:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԽՈՒԼ ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԶՊԵՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՇԻՐԱԿ

Խուլ դժգոհություն է հասունացել մարզպետաց դասում: Բանն այն է, որ մեկ մարդ է որոշում՝ ով պետք է խորհրդարան գնա, ով գործադիրում մնա եւ ով վաստակած հանգստի մեկնի: Իսկ Նիկոլ Փաշինյանը որոշել է, որ մարզպետները չպետք է վերցնեն պատգամավորական մանդատները, թեպետ շաբաթներ առաջ նրանցից շատերը լուրեր էին տարածում, թե գնալու են խորհրդարան, վայելեն առաջիկա հինգ տարվա անվրդով կյանքը՝ առանց պատասխանատվության միայն կոճակ սեղմեն եւ բարձր աշխատավարձ ու պարգեւավճար ստանան: Մանավանդ՝ նրանք գիտեին, որ 2028 թվականին մարզպետարանները լուծարվելու են, եւ չէին ուզում մեկ-երկու տարուց անգործ մնալ: Բայց նրանց ցանկությունը ոչ մեկին չի հետաքրքրում:

Համայնքները խոշորացնելուց հետո մարզպետաց ինստիտուտը կլուծարվի, ավելի ճիշտ՝ կվերակազմավորվեն մարզպետարանները. տեղերում կմնան փոքրաթիվ աշխատակազմեր՝ կառավարության ներկայացուցչով: Ուստի հասկանալի է, որ մարզպետները նեղված են, բայց չեն կարող հակադրվել Փաշինյանի որոշմանը, անգամ այդքան սիրտ չեն անում, որ նրա հետ քննարկեն իրենց ցանկությունները, նրա կամքն անքննելի է: Ի դեպ, ըստ իշխանության աղբյուրների, այս գործընթացն ըստ էության մեկնարկել է եւ ավարտին պետք է հասցվի առաջիկա երկու տարում, մարզպետարանները լուծարելու հիմնավորումը վարչական համակարգի օպտիմալացումն է: Կա տեսակետ, որ մարզպետարաններն այլեւս չեն իրականացնում այնպիսի գործառույթներ, որոնք արդարացնեն այդ մեծ կառույցների գոյությունը:

Այս նկատառումով էլ վերջին տարիներին մարզպետարաններին զրկում են մի շարք առանցքային լիազորություններից: Դիցուք՝ բժշկական կենտրոնների տնօրենների նշանակման եւ ազատման գործընթացը կենտրոնացվել է առողջապահության նախարարությունում, սեպտեմբերից հանրակրթական դպրոցների կառավարման գործառույթներն ամբողջությամբ անցնելու են կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը, սոցիալական ծառայությունների գործառույթները նույնպես վերակազմակերպվել են:

Կառավարության նիստից հետո երեկ լրագրողները մի քանի մարզպետից հետաքրքրվել են նրանց ճակատագրի մասին, հարցրել մարզպետարանների լուծարման գործընթացից: Բոլորը միաբերան պնդել են, թե քննարկում չի եղել այդ հարցով, իրենք տեղյակ չեն: Իսկ Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի մարզպետներն էլ հերթապահ բացատրություն են տվել, թե ինչու են հրաժարվել մանդատներից՝ ասելով, որ մարզում աշխատելն իրենց ավելի է դուր գալիս, եւ իրենք են իբր նման որոշում կայացրել, ոչ թե պարտադրված են բացարկի դիմումներ գրել:

Շիրակի մարզպետ **Դավիթ Առուշանյանը**, որ խորհրդարանից է ժամանակին տեղափոխվել մարզպետի պաշտոնին, առաջիններից է, որ հայտնեց մանդատից հրաժարվելու որոշման մասին: Երեկ նա մեզ ասաց, թե որոշում է կայացվել, որ ինքը պետք է շարունակի աշխատել գործադիրում, ինքն էլ ընդունել է: Մեր տեղեկությունների մասին բարձրաձայնեցինք, որ մարզպետներն ավելի հեշտ գործ էին նախընտրում՝ խորհրդարան գնալը, բայց իրենք չեն որոշողը: «Դե, չես համեմատի օրենսդիր եւ գործադիր մարմինների աշխատանքները, ամեն մեկն իր կարեւորությունն ունի, բայց ես պատասխանատվություն ունեմ մարզի բնակիչների հանդեպ, պատասխանատվություն ունեմ մեր թիմի հանդեպ, որոշումը կայացվել է, որ մնալու եմ, շարունակեմ աշխատանքը, որը շատ սիրում եմ»,- ասաց Առուշանյանը: Չէի՞ք ուզենա ավելի հեշտ ու ավելի երաշխավորված գործի գնալ՝ կոճակ սեղմել միայն: «Այս կյանքում ի՞նչն է հեշտ, եւ հետո՝ ԱԺ-ում կոճակ չեն սեղմում միայն, դուք տեսել եք իմ աշխատանքը, պատգամավորները չերեւացող շատուշատ գործառույթներ ունեն: Բայց, ամեն դեպքում, այո, գործադիրի աշխատանքը մի քիչ ավելի աշխատատար է ու նաեւ իր մեջ հետաքրքիր էլեմենտներ ունի, որ դու կարողանում ես լավ բան անել մարզիդ, քաղաքիդ համար, այդ գիշեր կարողանում ես հանգիստ քնել, դա էլ իր հաճույքն ունի»:

Խոսելով մարզպետարանների օպտիմալացման մասին, մարզպետ Առուշանյանն ասաց, որ նման քննարկում չեն ունեցել, բայցեւ չբացառեց, որ այդ գործընթացը կարող է սկսվել: Նկատեցինք, որ արդեն սկսվել է՝ մարզպետարանների ենթակայությունից կրթական, առողջապահական հաստատություններն են դուրս բերվում: «Այդ լիազորությունները մարդն է իր համար ստեղծում: Չկա մի կառուց, որի նկատմամբ ես չունենամ հետաքրքրություն, որովհետեւ բոլոր կառույցները կապ ունեն մարզիս բնակիչների հետ, դա իրավական կլինի, թե բարոյական՝ հարցի մյուս կողմն է»,- փիլիսոփայական պատասխան տվեց Առուշանյանը՝ շարունակելով. «Հետո էլ՝ այնպես չէ, որ դպրոցներն ամբողջությամբ գնացել են ԿԳՄՍՆ-ի ենթակայության տակ, վարչատնտեսական համակարգումն ու ֆինանսական հատվածը, եթե չեմ սխալվում, մարզպետների ենթակայության տակ է, կրթական մասը՝ նախարարության»: Առուշանյանը պնդեց, որ մարզպետարաններն ավելորդ կառույցներ չեն. «Միանշանակ, որովհետեւ մարզպետարանները կառավարության ներկայացուցչություններն են մարզում ու բոլոր առումներով՝ թե՛ ՏԻՄ-երի հետ աշխատանքի, թե՛ ուժայինների, տեսչականների, առողջապահական ու կրթական համակարգերի»:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԽՈՍՏՈՒՄԸ ՏՎԵԼ ԵՆ՝ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ

«Ուժեղ Հայաստան» կուսակցությունն ընտրություններից հետո էլ է այցելում մարզեր, հավաքագրում բնակչության խնդիրները: Նաեւ հայտարարել է, որ Լոռու մարզի այն համայնքներում, որտեղ իրենք ստացել են ընտրողների մեծամասնության աջակցությունը, իրականացնելու են իրենց խոստումները: Մասնավորապես՝ Ստեփանավանի, Գյուլագարակի եւ Տաշիրի տարածաշրջանների այն ընտանիքները, որտեղ կծնվի հինգերորդ երեխան, իրենցից բնակարան նվեր կստանան՝ ձեւակերպված մոր անունով: «Հայաստանում ընտրություններից առաջ մենք խոսք էինք տվել, որ այն ընտանիքները, որտեղ կծնվի հինգերորդ երեխան, բնակարան պետք է ստանան: Այսօր մեկնարկում ենք այդ ծրագիրն այն տարածաշրջաններում, որտեղ մարդիկ մեզ վստահել են»,- նշել է Նարեկ Կարապետյանը: Այս քայլը ՔՊ-ականներին իրար է խառնել, ոմանք սա անգամ որակեցին ընտրակաշառք՝ մոռանալով, որ ընտրություններից առաջ միայն իրենք էին պետական միջոցներից կաշառում մարդկանց՝ թոշակ ու անվճար դեղեր բաժանելով: Հիմա ընտրությունները ետեւում են մնացել, եւ սա չի կարող ընտրակաշառք համարվել: Զրուցել ենք քաղտեխնոլոգ **Արմեն Բադալյանի** հետ:

- Սա աննախադեպ քայլ է հայաստանյան քաղաքական դաշտում: Քաղաքական ուժերը սովորաբար ընտրություններից առաջ են մարզեր գնում, խոստումներ տալիս, իսկ ընտրություններից հետո մոռանում են դրանց մասին՝ մինչեւ հաջորդ ընտրություններ: Կարապետյաններն իշխանություն չեն, բայց իրենց խոստումները կյանքի են կոչում: ՔՊ-ականները ցնցումների մեջ են ընկել, այս քայլն անգամ որակում են ընտրակաշառք: Ինչպե՞ս կգնահատեք այս քայլը:

- Սա այն խոստումների փոխարինումն է, գուցե դրանց չկատարման փոխհատուցումն է, որոնք այս ուժը չկարողացավ իրականացնել: Սամվել Կարապետյանի ուժն ամեն քայլափոխի կրկնում էր, որ Կարապետյանն է լինելու հաջորդ վարչապետը, որ Նիկոլ Փաշինյանին հեռացնելու են իշխանությունից, բայց քանի որ նման բան տեղի չունեցավ, հիմա էլ փաստացի իշխանափոխության օրակարգ չկա, հարցը հետաձգվել է, օրակարգը պետք է փոխարինեն ինչոր այլ բանով, ուստի որոշել են իրենց խոստումներից որոշ կետեր կյանքի կոչել: Իրենց հիմնական խոստումը ոչ թե բազմանդամ ընտանիքներին տուն տալն էր, 300 հազար աշխատատեղ ստեղծելն էր, այլ Նիկոլ Փաշինյանին հեռացնելը: Մնացած սոցիալական հարցերը երկրորդական, երրորդական են:

- Իսկ ՔՊ-ականներն ինչո՞ւ են ցնցումների մեջ ընկել: Եվ սա ի՞նչ ազդեցություն կթողնի հասարակության վրա:

- Միանշանակ, այս քայլն ընտրակաշառք չէ, մարդիկ խոստացել էին՝ կատարում են իրենց խոստումը: Ինչ վերաբերում է հանրության վրա ազդեցություն գործելուն, ապա, անկեղծ ասած, չեմ հասկանում, թե այն ինչպես կարող է դրական կամ բացասական ազդել մարդկանց վրա:

- Օրինակ, չի՞ դառնա քաղաքական կապիտալի մաս՝ առաջիկա ՏԻՄ ընտրությունների կամ հետագա քաղաքական զարգացումների առումով:

- ՏԻՄ-երի մասով ոչինչ էլ չի կարող տեղի ունենալ: Հայաստանում ընտրական մեխանիզմները չեն աշխատում: Ասենք թե Ստեփանավանում կամ Տաշիրում «Ուժեղ Հայաստան»-ի թեկնածուն դարձավ քաղաքապետ, ի՞նչ է դա տալու ընդդիմությանը: ՏԻՄ ընտրությունները առկա սահմանադրության պարագայում ոչինչ չեն տալու ընդդիմությանը: Սահմանադրությունն այնպես են գրել, որ միակ կարեւոր պաշտոնը վարչապետի պաշտոնն է: Հայաստանում ընտրությունների ինստիտուտը չի աշխատում, եւ ընտրություններով չես կարող իշխանություն փոխել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱ՞ՆԸ

Եվրամիությունը տվեց «EUPM Հայաստան» առաքելության մեկնարկը, որն իրականացվելու է ՀՀ իշխանությունների խնդրանքով: Ինչ է իրենից ներկայացնում այս առաքելությունը: Գործընկերային բնորոշումը ստացած առաքելությունը հայտարարում է, որ պետք է պայքարի հիբրիդային սպառնալիքների դեմ, կանխարգելի արտաքին ճնշումները եւ ամրապնդի Հայաստանի դիմակայունությունը: Առաքելության գործառույթների մեջ են մտնում նաեւ կեղծ տեղեկատվության (FIMI) եւ կիբեռանվտանգության մարտահրավերների բացահայտումն ու դրանց արձագանքելու կարողությունների զարգացումը, ինչպես նաեւ՝ անօրինական ֆինանսական հոսքերին դիմակայելը: Առաքելության մանդատը 2 տարի է, կազմում ընդգրկվելու են ԵՄ անդամ պետությունների փորձագետներ, ղեկավարն է Կոսմին Դինեսկուն, որը նշանակվել է 2026 թ. հունիսի 11-ին՝ ՀՀ խորհրդարանական ընտրություններից 4 օր հետո, չնայած առաքելությունը ստեղծվել է 2026 թ. ապրիլի 26-ին:

ԵՄ կայքում շեշտված է, որ առաքելությունը ՀՀ իշխանությունների խնդրանքով է ստեղծվել: Արարատ Միրզոյանի՝ Բրյուսել այցելություններից հետո Կայա Կալլասը գոնե երեք անգամ այդ մասին հրապարակային հայտարարել է: Ո՞վ է Կոսմին Դինեսկուն. նա ռումինացի դիվանագետ է, դեսպան ՝ շուրջ 25 տարվա դիվանագիտական փորձով, բարձր պաշտոններ է զբաղեցրել Ռումինիայի ԱԳՆ-ում, նշանակվել է դեսպան Լիտվայում, Լատվիայում եւ Խորվաթիայում: 3 տարի եղել է Մոլդովայում ԵՄ նույնանման առաքելության՝ EUPM Moldova-ի առաջին ղեկավարը, ղեկավարել է ԵՄ առաջին քաղաքացիական CSDP առաքելությունը, որն ազգային ճգնաժամային կառավարման կառույցներին աջակցելու եւ հիբրիդային սպառնալիքներին հակազդելու համար էր ստեղծվել: Փաստորեն, Կալլասի՝ Հայաստանի եւ Մոլդովայի միջեւ զուգահեռներ տանելը պատահական չէր:

Առաքելությունը պատրաստվում է Հայաստանի ազգային հաստատություններին տրամադրել «ռազմավարական խորհրդատվություն, տեխնիկական փորձագիտական աջակցություն եւ օժանդակել ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը»: Առաքելության նպատակներին ծանոթանալիս հասկանում ես, որ սա բավականին մտահոգիչ իրավիճակ է ստեղծում, քանի որ բուն նպատակը հասկանալի է՝ Եվրոպայի թշնամի Ռուսաստանին հեռացնել, ամեն կերպ աջակցել Հայաստանին՝ ռուսական ազդեցությունից ազատվելու, այն, ինչ արել են Ուկրաինայում: Եվ այս ամենի մեջ խոսքի ազատության սահմանափակումներ, ընդդիմադիր լրատվամիջոցների նկատմամբ սանկցիաներ են նշմարվում:

Մեդիափորձագետ **Արթուր Պապյանը** «Հրապարակի» հետ զրույցում, սակայն, ասում է, որ դժվար թե այս առաքելության տրամադրած խորհրդատվության մեջ լինի մի բան, որը կարող է սպառնալ տեղեկատվական ազատությանը, քանի որ դա դեմ է Եվրոպայի արժեքներին; Այդ խորհրդատվությունը, ըստ Պապյանի, ուղղված կլինի ավելի էֆեկտիվ կոմունիկացիային: «Գաղտնիք չէ, որ մեզ մոտ մամուլի խոսնակներն ավելի հաճախ աշխատում են ոչինչ չխոսել, եւ ես գիտեմ, որ ԵՄ փորձն այդ առումով կարող է օգտակար լինել՝ ավելի բաց հաղորդակցվելու, տեղեկատվության տրամադրման հարցում: Իրենց գործունեությունը մենք տեսել ենք հիբրիդային առաքելության կազմում, եկան Երեւան, գնացին, առանձնապես շատ բան չիմացանք, թե ինչ արեցին: Հայտնի է, որ հիմնականում զբաղվել են նրանով, որ խորհրդատվություն են տրամադրել ԿԸՀ-ին, պետական մարմիններին, որպեսզի իրենց հաղորդակցությունները՝ ընտրությունների հետ կապված, ավելի արդյունավետ լինեն: Արդյո՞ք դա ռեալ ազդեցություն ունեցել է, թե ոչ՝ դժվարանում եմ դատել, որովհետեւ, իմ տպավորությամբ, առանձնապես շատ բան չի էլ փոխվել, եթե համեմատենք նախորդ՝ 2021 թ. ընտրությունների հետ»,- ասաց մեդիափորձագետը: Մեր դիտարկմանը, որ Հայաստանում առաքելության ղեկավարը Մոլդովայում նույն առաքելությունն է ղեկավարել, եւ դրա անվան տակ հակառուսական քաղաքականություն է իրականացվել, վտանգ չկա՞, որ նույնը մեզ մոտ կլինի, Պապյանն ասաց, որ այս առաքելության հետ կապված՝ հիմնականում մտահոգություն են արտահայտում ռուսական լրատվամիջոցները: «Դա զարմանալի չէ, որովհետեւ իրենք դա դիտարկում են Ռուսաստան-ԵՄ, Ռուսաստան-Արեւմուտք հակամարտության ֆոնին, եւ այդ պրիզմայով նայելու դեպքում որոշակի ռիսկ կա, որ սա էլ ավելի կսրի հարաբերությունները Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ»: Այսինքն, առաքելությունը Փաշինյանը չի՞ օգտագործի անկախ ու ընդդիմադիր լրատվամիջոցներին զսպելու, ազատ խոսքը սահմանափակելու համար: Մեդիափորձագետն ասաց, որ այդ վտանգը կա՝ անկախ ամեն ինչից, սակայն. «Եվրոպան խոսքի ազատության պատվարն է, եւ չի կարող եվրոպական որեւէ առաքելություն խոսքի ազատության կամ որեւէ լրատվամիջոցի համար սահմանափակող ինչ-որ բան ներմուծել: Իրենք դրա առաջամարտիկն են, եւ, իհարկե, կա որոշակի մտահոգություն, որ, օրինակ, կխրախուսեն սահմանափակումներ մտցնել ռուսական ինչ-որ ալիքների, ազդեցության գոտիների դեմ: Որովհետեւ դա տեսել ենք մի շարք եվրոպական երկրներում, որտեղ ռուսական պետական լրատվամիջոցների գործունեությունը սահմանափակել են: Սակայն մինչեւ այս առաքելության գալը մենք տեսել ենք, որ Սոլովյովի հաղորդումը, որի ժամանակ Հայաստանի նկատմամբ թշնամական արտահայտություններ են արվում, արգելափակված է, բայց կան ռուսական ալիքներ, որոնք, եթե Հայաստանը ուզենար, կփակեր: Նույնիսկ հնարավոր է, որ Հայաստան եկած հիբրիդային առաքելության անդամները խորհուրդ տված լինեն՝ փակել այդ հեռուստաալիքները, բայց մենք տեսնում ենք, որ դրանց հեռարձակմանը ոչինչ չի սպառնում: Եթե ռուսական լրատվամիջոցների մասով որեւէ նման քայլ չենք տեսնում, մյուսների մասով, կարծում եմ, առանձնապես մտահոգվելու կարիք չկա»:

Քաղաքագետ **Հակոբ Բադալյանը** կարծում է, որ ԵՄ առաքելությունը լինելու է Եվրամիության աշխարհաքաղաքական գործիք, եւ բնական է, որ աշխատելու է, որպեսզի Հայաստանում առավելագույն գերակայության հասնի իր գլխավոր թիրախի հարցում՝ Ռուսաստանի ազդեցությունը չեզոքացնելու: «Ցանկացած ուղղություն, որը ոչ թե կլինի ռուսական նարատիվների շրջանակում, այլ դուրս կլինի Եվրոպական Միության աշխարհաքաղաքական նարատիվներից, բնականաբար, կհայտնվի թիրախում, եւ, իհարկե, կփորձեն Հայաստանի իշխանության վրա ունեցած իրենց ազդեցությունը ծառայեցնել այդ թիրախները չեզոքացնելուն: Այդ երեւույթը, բնականաբար, կարող է վերաբերել նաեւ Հայաստանի տեղեկատվական դաշտին»,- ասաց Բադալյանը: Դետալացնել հնարավոր չէ, սակայն ԵՄ աշխարհաքաղաքական նարատիվներից դուրս գտնվող ցանկացած բան կհայտնվի արագ արձագանքման խմբի գործունեության թիրախում եւ Հայաստանի իշխանության միջոցով կհասնի տվյալ միջավայրերի չզոքացմանը՝ կարծում է Բադալյանը: «Պատահական չէ, իհարկե, որ այդ գործին դրված է մարդ, որն այդպիսի աշխատանքի փորձ է ձեռք բերել Մոլդովայում: Մնացյալն արդեն, թե ինչին կվերաբերի, ինչին չի վերաբերի, կախված է մի շարք այլ գործոններից: Եվրամիությունը ձգտելու է դրան, բայց, իհարկե, այստեղ կա նաեւ այն հանգամանքը, թե ՀՀ իշխանությունն ինչ հարցերում տեղի կտա, ինչ հարցեր կհամարի, որ իր շահերից չեն բխում: Այստեղ պատկերը, իհարկե, չի լինելու միարժեք. միարժեք է լինելու ԵՄ-ի ձգտումը: Ի վերջո, պաշտոնական Երեւանը հարաբերվելու է նաեւ այլ աշխարհաքաղաքական կենտրոնների հետ, եւ հասկանալի է, որ անվերապահորեն ԵՄ բոլոր ցանկությունների կատարման ռեժիմն ապահովված չէ, իմ պատկերացմամբ: Այս տեսանկյունից, իհարկե, Երեւանն ունի այլ անհրաժեշտություններ՝ Մոսկվայի հետ աշխատանքի, Թեհրանի հետ աշխատանքի, նույնիսկ Վաշինգտոնի հետ աշխատանքի իմաստով»,- նկատեց քաղաքագետը: Եվ որքան էլ սերտ լինեն Բրյուսել-Անկարա հարաբերությունները, այս տեսանկյունից ոչինչ միարժեք չէ: Միարժեք է ԵՄ նպատակադրումը, դրա իրականացումը կախված է տարբեր հանգամանքներից՝ նկատում է Հակոբ Բադալյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՄԻ ԿՏՈՐ «ԶԱՊԱՍ» ԷԻՆ ՊԱՀԵԼ

Վանաձորի նախկին քաղաքապետ, «Ուժեղ Հայաստանից» պատգամավորության թեկնածու Մամիկոն Ասլանյանին նոր մեղադրանք է առաջադրվել: Հակակոռուպցիոն կոմիտեն նրան մեղադրում է պաշտոնեական կեղծիք կատարելու մեջ՝ Վանաձորի քաղաքապետ եղած ժամանակ: Ասլանյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Հիշեցնենք, որ Մամիկոն Ասլանյանին առաջին անգամ կալանավորեցին Վանաձորի ՏԻՄ ընտրություններում հաղթելուց հետո՝ 2021 թվականին, 2 տարուց ավելի պահեցին կալանավայրում՝ խոչընդոտելով, որ նա Վանաձորի քաղաքապետ ընտրվի: Եվ Վանաձորը մինչ օրս չունի ընտրված քաղաքապետ՝ ժամանակավոր պաշտոնակատարն է կառավարում քաղաքը, իսկ ավագանին նիստեր չի գումարում:

Ասլանյանի նկատմամբ առաջին քրեական գործը վերաբերում էր նրա պաշտոնավարման տարիներին իրականացված հողային աճուրդին: Որքան էլ մեղադրանքն անհիմն էր թվում, առաջին ատյանի դատարանը նրան մեղավոր է ճանաչել եւ դատապարտել 4 տարի 4 ամիս ժամկետով ազատազրկման: Պաշտպանական կողմը դատավճիռը բողոքարկել է վերաքննիչ դատարանում, որտեղ հիմա այն քննվում է: Բայց իշխանությունը, փաստորեն, չի բավարարվել մեկ քրգործով, նոր վարույթ են սկսել նրա նկատմամբ: Հիմա էլ, հավանաբար, փորձում են խոչընդոտել, որ նա ԱԺ պատգամավոր չդառնա: Վանաձորի նախկին քաղաքապետը «Հրապարակ»-ի հետ զրույցում ասաց, որ այս նոր մեղադրանքն իրեն առաջադրվել է նախընտրական քարոզարշավից առաջ, խափանման միջոց են ընտրվել բացակայելու արգելքն ու 3 միլիոն դրամ գրավը:

«Հողերի հետ կապված» գործից մի բան պահել էին, որ եթե ես քաղաքական ակտիվություն դրսեւորեմ, հարուցեն, սա իմ առաջին քրեական գործից անջատված մաս է, պահել էին, որ պահեստային տարբերակ ունենան՝ իմ քաղաքական ակտիվությանը զուգահեռ, նոր հարուցեն: Նոր բան չէ դա: Հիմա է պետք՝ նոր են անում: Հողերից առանձնացած զապաս էին պահել, չգիտեմ՝ ինչի մասին է, իրենք ինչ ուզում, գրում են»: Մամիկոն Ասլանյանի նկատմամբ վարույթները, ըստ մի շարք իրավաբանների, դասական քաղաքական հետապնդում են:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԿՈՂԱՅՈ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՍԻ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ

Փաշինյանը լուրջ հակառակորդ ունի ոչ միայն ի դեմս հայաստանյան ընդդիմության եւ հասարակության, այլեւ՝ իշխանության ներսում: Եթե ընդդիմության առաջնորդներին կարող է ունեզրկել եւ կալանավորել, ապա իշխանության ներսի իր մրցակցին չի կարող ոչ միայն նեղացնել, այլ եւստիպված է համակերպվել նրա առաջխաղացման հետ: Խոսքն ԱԺ նախագահի պաշտոնի հավակնորդ Ռուբեն Ռուբինյանի մասին է, նա իշխանության ներսում վարչապետի պաշտոնի ամենահավանական հավակնորդն է այս պահին: Եթե ներիշխանական հեղաշրջում տեղի ունենա, ապա դա կարող է լինել միայն Ռուբինյանի գլխավորությամբ: Փաշինյանը չի կարող սահմանափակել նրա իշխանությունը, որովհետեւ նա ունի Թուրքիայի նման հզոր արտաքին հովանավոր: Ի տարբերություն Ալեն Սիմոնյանի, որն ամբողջ քարոզարշավի ժամանակ հնազանդորեն հետեւում էր Փաշինյանին, Ռուբինյանն իրեն ավելի հեռու պահեց եւ, ըստ այդմ, ավելի զուսպ ու լուրջ էր պահում իրեն: Մի մարդու նման, որը գիտի իր ազդեցությունը եւ արժեքը, որը կարիք չունի իր թվացյալ վերադասի առաջ ավելորդ ծամածռություններ անելու, նրան շողոքորթելու, նրա բարեհաճությունը ստանալու համար՝ հասկանալով, որ իր հարցերը լուծվում են անհամեմատ ավելի բարձր մակարդակով:

Օրերս հայտարարվեց, որ Փաշինյանն իբրեւ թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հայաստանյան կողմի բանագնացի թեկնածու է փնտրում, որովհետեւ Ռուբեն Ռուբինյանն այլեւս ԱԺ նախագահի թեկնածու է, գրեթե ԱԺ նախագահ: Հայաստանի հանրության, այդ թվում եւ ընդդիմության մեջ կա այն հաստատ համոզումը, որ Ռուբինյանի առաջխաղացման մեջ զգալի է եղել Թուրքիայի աջակցությունը, ըստ այդմ, նա չի կարող լինել հայաստանյան կողմի բանագնաց, նա թուրքական կողմից բարձր ներկայացուցիչն է Հայաստանի իշխանության ներսում: Եթե Փաշինյանը փորձի պաշտոնազրկել Ռուբինյանին, ապա կարժանանա թուրքական կողմի կոշտ հակազդեցությանը: Այդ դեպքում Թուրքիան եւ այդ երկրի իշխանություններն իրենք կարող են նախաձեռնել Փաշինյանի պաշտոնազրկումը, քանի որ Հայաստանի խորհրդարանում ունեն պրոթուրքական խմբակցություն: Չհաշված այն, որ Թուրքիան ունի ազդեցության այլ լծակներ եւս:

Արդյո՞ք դա նշանակում է, որ Փաշինյանը պետք է հանձնվի եւ սպասի այն օրվան, երբ Թուրքիան կորոշի, որ այլեւս Փաշինյանը չի բավարարում իրենց պահանջներին, եւ նրան պետք է փոխարինել Ռուբեն Ռուբինյանով, երբ Ռուբինյանի կողմից ղեկավարվող խորհրդարանն անվստահություն կհայտնի Փաշինյանին եւ վարչապետի պաշտոնում կընտրի Ռուբինյանին: Փաշինյանը փորձում է չհանձնվել եւ նույնիսկ դիմադրել:

Օրինակ՝ այն տեղեկությունը, որ հատուկ բանագնացի պաշտոնում քննարկվում է ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանի թեկնածությունը, կարող է նշանակել մի քանի բան. Փաշինյանը համարում է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն այնքան փակուղային եւ անլուրջ վիճակում է, որ ճիշտ կլինի այդ պաշտոնը հնարավորինս անլրջացնել, իսկ Վահան Կոստանյանին այդ պաշտոնի համար առաջադրելն ամենահարմար եղանակն է: Բացի այդ, առաջադրելով Կոստանյանի թեկնածությունը, Փաշինյանը կարող է ընդհանրապես վերացնել հատուկ բանագնացների ֆորմատը, Թուրքիան կարող է Կոստանյանի թեկնածության առաջադրումը համարել բացահայտ վիրավորական քայլ եւ մերժել նրա թեկնածությունը, Թուրքիան իրեն այդպիսի իրավասություն է վերապահել: Այդ դեպքում հատուկ բանագնացների ինստիտուտն ընդհանրապես կդադարի գոյություն ունենալ: Եթե անկեղծ լինենք, դրա գոյությունը որեւէ արդյունք չի տվել, գոյության չորս տարիների ընթացքում այն որեւէ առաջընթաց չի ապահովել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Հնարավոր է նաեւ, որ Թուրքիան համարում է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթաց ընդհանրապես չկա, կա Հայաստանի թուրքացման գործընթաց, իսկ դրա համար բանագնաց կամ հատուկ ներկայացուցիչ պետք չէ, Ռուբեն Ռուբինյանը եւ պրոթուրքական ֆրակցիայի մյուս ներկայացուցիչներն այդ գործը կանեն իրենց զբաղեցրած պաշտոնների միջոցով:

Փաշինյանն իր իշխանությունը պահելու համար ավելի ու ավելի է փորձելու հենվել Ադրբեջանի աջակցության վրա՝ Ադրբեջանի իշխանությանը եւ հատկապես այդ երկրի նախագահ Իլհամ Ալիեւին համոզելով, որ նրա համար ավելի շահավետ կլինի, եթե Հայաստանի վարչապետի պաշտոնին նստած լինի պրոադրբեջանական կողմնորոշում ունեցող մեկը՝ հանձին իրեն, քան բացահայտորեն թուրքական դրածո: Ալիեւին կարծես թե Հայաստանի եւ մասնավորապես Փաշինյանի հովանավորյալի դերն այնքան էլ խորթ չէ, եւ, թերեւս, դրանով են պայմանավորված նրա այն հայտարարությունները, որ Ադրբեջանը պատրաստ է ապահովել Հայաստանն էներգետիկ ռեսուրսներով կամ միակողմանիորեն ապահովել երկաթուղային կապ արտաքին աշխարհի հետ, այն դեպքում, երբ հենց Ադրբեջանի ցուցումով է, որ Վրաստանը թույլ չի տալիս աբխազական երկաթուղու գործարկումը: Սա հենց հովանավորի գործառույթ է՝ ապահովել հովանավորյալի բազային կարիքները՝ հաց, բենզին եւ երկաթուղային կապ:

Իսկապես զավեշտալի տեսարան է. վարչապետի պաշտոնում՝ պրոադրբեջանական Փաշինյանը, իսկ ԱԺ նախագահի պաշտոնում՝ թուրքական դրածոն, որն ամեն պահի կարող է սպառնալիք լինել Փաշինյանի իշխանության եւ զբաղեցրած պաշտոնի համար: Չնայած կարող է ոչ մի հակամարտություն էլ չլինել, ուղղակի Էրդողանը եւ Ալիեւը որոշել են եղբայրաբար իրար մեջ բաժանել Հայաստանը կամ՝ առայժմ Հայաստանի իշխանությունը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԻԱՄԻՏ ԵՐԱՁԱՆՔ

Ծառուկյանին պատկանող «Մուլտի գրուպ սթոուն» ՓԲԸ-ի՝ բողոքի դուրս եկած աշխատակիցներից մեկը հռետորական հարց է բարձրացնում, թե «ինչի պետք է քաղաքականության համար բանվորը տուժի»: Բանվորի տեսակետից արդարացի է այդ հարցը, սակայն այն չունի միանշանակ արդարացի պատասխան: Կա միայն ընդհանրական պատասխան. մեր կյանքում տեղի ունեցող ամեն ինչ քաղաքականություն է կամ դրանից ածանցված երեւույթ, ընդ որում, այդ թվում՝ հենց քաղաքականության դեմ բողոքելը: Եվ մինչեւ դա չընկալվի այդ աշխատակցի կողմից՝ այն կուղղվի հենց իր ու իր նմանների դեմ: Որովհետեւ իշխանությունն ուժեղ է այն դեպքում, երբ դիմացինն իր իրավունքներին չի տիրապետում, օրենքներին ծանոթ չէ: Իսկ երբ առկա է լինում հակառակ պատկերը՝ մարդը գրագետ է ու իրազեկված, իշխանության գործը կրկնակի, եռակի բարդանում է: Որովհետեւ սեփական իրավունքները ճանաչելով՝ շատ ավելի հեշտ է դրանք պաշտպանելու համար պայքար մղելը: Հեշտ է թե՛ իրավական տեսակետից եւ թե՛ նույնիսկ հոգեբանորեն: Դա՝ մեկ:

Երկրորդ. կասեցնելով Գագիկ Ծառուկյանին պատկանող բազմաթիվ ձեռնարկությունների աշխատանքը՝ գործող իշխանությունը չի պատժում միայն սեփականատիրոջը: Նա գիտակցված պատժում է հենց նրա աշխատակիցներին, քանի որ նրանք, նախ, աշխատում են այդ ձեռնարկություններում, եւ դա արդեն ինքնին, վերջինիս կարծիքով, բավարար հիմք է նրանց պատժելու համար: Եվ երկրորդ, ինչը շատ ավելի «պատժելի» արարք է. նրանց մի մասը հունիսի 7-ին, վստահաբար, ձայն է տվել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, ինչով անձնական «վիրավորանք» են հասցրել ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձին: Քաղաքականությունից հեռու մարդը չի հասկանա հատկապես այդ հանգամանքը: Ինչեւէ, առաջին հանգամանքն ինչ-որ չափով «արդարացված» է. իրենք ստիպված են եղել աշխատել ծառուկյանական որեւէ ձեռնարկությունում, քանի որ այդտեղ առկա է եղել աշխատելու հնարավորություն: Նույնը չի կարելի ասել երկրորդի առումով. առկա է եղել ընտրելու հնարավորություն եւ դա անելու գիտակցական որոշում: Բայց վերը նշված անձը պատժում է երկու դեպքի համար էլ, քանի որ նման նրբություններն իր համար եղած-չեղած բան են, չնայած սիրում է խոսել նրբություններից:

Այսքանը գրելուց հետո մի պահ կանգ առա. իսկ ո՞վ է ասել, որ բանվոր մարդը պետք է իր իրավունքներն իմանա, որ մի հատ էլ դրանք պաշտպանի: Նման բան գոյություն չունի ո՛չ մեզանում եւ ո՛չ էլ նույնիսկ զարգացած ժողովրդավարական երկրներում: Այդ խնդիրներն այնտեղ պատվիրակված են ինչ-ինչ մարմինների ու միավորումների: Օրինակ՝ արհմիութենական, հասարակական, նեղ մասնագիտական, իրավապաշտպան կազմակերպություններին: Դե իսկ ձեռնարկությունների գործունեության ապօրինի կասեցումները՝ փաստաբանական ընկերություններին: Բա ի՞նչ անեն մեզանում նման մարդիկ՝ կհարցնի ընթերցողը: Անկեղծ պատասխանեմ՝ չգիտեմ: Նախկինների օրոք նման պատասխան չէի տա, քանի որ, որպես հասարակական կազմակերպության (ՀԿ) անդամ, մասնակցում էի հենց այդ իրավունքների պաշտպանության գործընթացներին: Բայց 2018-ին չբավարարվելով առկա հնարավորություններով՝ ցանկացանք ավելին ու հայտնվեցինք կոտրած տաշտակի առջեւ՝ կորցրինք այն, ինչ ունեինք դրանից առաջ:

Իհարկե, հիմա էլ է գործում այդ կազմակերպությունների որոշ մասը, անգամ ստեղծվել են նորերը: Ու նույնիսկ դատարաններում են կարողանում հաջողության հասնել՝ հիմնավորելով իրենց պաշտպանյալների անմեղությունը: Բայց, մեծ հաշվով, իրականություն է փոխվել, ու երկիրը շարժվում է «դատավոր կմ, որ իմ ասածը չանի» անօրեն խոսքի տրամաբանությամբ: Նայենք հենց նույն Ծառուկյանի գործը: Մարդն ավելի քան 15 միլիոն դոլարի չափով «քցվել»

է իրանցի գործընկերների կողմից: Ու փոխանակ նրան տուժող ճանաչեն, նրա իրավունքների վերականգնմանն օգնեն, դարձրել են մեղավոր ու կալանավորել: ՀՀ իրավապահների կողմից իրականության 180 աստիճանի այլափոխումը կատարվել է հանուն այն բանի, որ հագուրդ տան Փաշինյանի վրեժխնդրությունը: Վերջինս չբավարարվեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության մուտքը խորհրդարան արգելափակելով, որոշել է մինչեւ վերջ սնանկացնել Ծառուկյանին: Ու այդ հարցում ունի պետական իրավապահ համակարգի անօրինական համագործակցությունը: Իսկ ես վերեւում միամիտ-միամիտ խոսում եմ բանվորի կողմից իր իրավունքները գիտակցելու ու դրանք պաշտպանելու մասին:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԴՐԱՆԻՑ Ո՛Չ ՏԱՔ, Ո՛Չ ԷԼ ՍԱՌԸ

Իսրայելի կառավարությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչեց եւ ուղարկեց օրենսդիր մարմնի՝ Կնեսետի քննարկմանը:

Ակայն, ինչպեսեւ ակնկալում էին հայկական շրջանակներում, այն Կնեսետի կողմից չքննարկվեց, գործընթացը սառեցվեց: Փոխարենը Իսրայելի ԱԳՆ-ն հայտարարություն տարածեց այն մասին, որ Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը զգացմունքային քայլ է եղել, որը պայմանավորված էր Թուրքիայի հետ լարված փոխհարաբերություններով: Բացի այդ, պարզվեց, որ Կնեսետը գնում է արձակուրդ եւ աշխատանքի կվերադառնա հոկտեմբերի վերջին: Այստեղ, իհարկե, իր դերակատարումն ունեցավ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որն Իսրայելի կառավարության նշված քայլը հրաժարվեց մեկնաբանել՝ պատճառաբանելով, թե դա ցեղասպանության զենքայնացման է հանգեցնելու, ինչը ցանկալի չէ: Պարզ ասած՝ ՀՀ իշխանությունը հորդորեց մոտ չգնալ այդ թեմային: «Հրապարակը» քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանի** հետ փորձեց հասկանալ, թե ինչու Իսրայելը ճանապարհի կեսից հետքայլ արեց:

- Իսրայելն ինչ քարտ խաղարկեց եւ ինչպե՞ս փորձեց օգտագործել Հայոց ցեղասպանության հարցը:

- Կարծում եմ, դա ակնհայտ է, եւ հարցի մեջ արդեն պատասխանը կա, դա Հայաստանի հետ ընդհանրապես կապ չունի: Իսրայելը հիմա փորձում է այդ պատմական փաստն օգտագործել որպես Թուրքիայի դեմ ճնշման լծակ, ինչպես ժամանակին արել են Արեւմուտքը, Եվրամիությանը, Միացյալ Նահանգները, Ռուսաստանը: Մի խոսքով, ամեն մեկը Հայոց ցեղասպանության փաստը փորձում է օգտագործել որպես լրացուցիչ ճնշման միջոց Թուրքիայի դեմ, ինչպես՝ ոչ միայն նաեւ քրդերի հարցը, հույների հարցը, պոնտական հույների ցեղասպանության հարցը եւ այլն: Դա այդ հարցերից մեկն է, եւ չեմ կարծում, թե դրանից մեր հասարակությունը պիտի ոգեւորվի կամ հիասթափվի:

- Որքանո՞վ է բարոյական, երբ ցեղասպանություն վերապրած ազգն առաջին ցեղասպանություն տեսած ազգի ցավոտ հարցը փորձում է խաղարկել:

- Իսկ Դուք կարծում էիք, որ արտաքին քաղաքականությունը պիտի բարոյակա՞ն լինի, բնականաբար՝ բարոյականությունն ու արտաքին քաղաքականությունն իրար հետ շատ քիչ աղերսներ ունեն, եւ, իհարկե, դա բարոյական չէ սովորական մարդկային ընկալումներում, բայց շատ ընդունված է միջազգային հարաբերություններում:

- Ի վերջո, Իսրայելը ստացա՞վ այն արդյունքը, ինչն ակնկալում էր:

- Չեմ կարծում: Դա կարող է եւ փոքր հարց լինել, որտեղ լինում է ինչ-որ ճնշում, լինում է պատասխան քայլ, հետո երկխոսություն է լինում, ինչ-որ մեկն ինչ-որ բան է զիջում, ամեն մեկը փորձում է ինչ-որ բան շահել այդ միջադեպից, օրինակ, Ադրբեջանը փորձեց դա ներկայացնել այնպես, թե իբր իրենք օգնեցին, որ ցեղասպանության ճանաչման բանաձեւը Կնեսետում չընդունվի: Այսինքն, կա փաստ, եւ բոլորը փորձում են դրանից առավել դիվիդենտներ քաղել: Հայաստանին դրանից ո՛չ տաք էր, ո՛չ ցուրտ՝ այսպես ասենք:

- Իսրայելի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծ ներկայացնելու մասով Նիկոլ Փաշինյանի արձագանքն ինչի՞ մասին էր վկայում:

- Ենթադրում եմ՝ նկատի ուներ այն, որ փորձում են դա օգտագործել որպես ազդեցության միջոց, զենք՝ միմյանց դեմ քաղաքական հարցերում, այսինքն՝ որ դա գործիք է:

- Բայց որպես ՀՀ վարչապետ, արդյո՞ք դա ադեկվատ պատասխան էր:

- Ես չեմ կարծում, թե կառավարության ղեկավարը պիտի նման հայտարարություն աներ: Նման կարծիք կարող էին հայտնել քաղաքագետները, ավելի փոքր կալիբրի պաշտոնյաները: Ամեն դեպքում, կառավարության ղեկավարը պիտի ձեռնպահ մնար այդպիսի հայտարարություններ անելուց, որովհետեւ այնտեղ այդքան բաց չէ ամեն ինչ, եւ բաներ կան, որ պետք չէ ասել: Կոնկրետ Իսրայելի դեպքում սա առաջին դեպքը չէ. հիշեցնեմ, որ 44-օրյա պատերազմի ժամանակ էլ, դրանից հետո էլ, երբ որ Իսրայելն օգնություն առաջարկեց Հայաստանին, էլի վարչապետ Նիկոլ Փաշինյանը շատ կոշտ, կոպիտ, կառավարության ղեկավարին ոչ հարիր բառապաշարով մոտավորապես ասաց, որ Իսրայելը թող իր այդ օգնությունը վերցնի եւ գրողի ծոցը գնա՝ մոտավոր բովանդակությունն եմ ասում: Կան բաներ, որ էմոցիոնալ տեսանկյունից գուցե ճիշտ են, բայց չի կարելի, որ պետության ղեկավարը, կառավարության ղեկավարը բարձրաձայն նման հայտարարություններ անի:

- Որովհետեւ նման հայտարարություններից բխող հետեւանքներն ավելի ձեռնտու են Թուրքիային եւ Ադրբեջանին:

- Որովհետեւ հարկ եղած դեպքում նրանք կարող են կառավարության ղեկավարի այդ խոսքերն օգտագործել հենց մեր պետության դեմ:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Հարված Թրամփին

Վերսկսված իրանական հակամարտությունը մեծացնում է հավանականությունը, որ մերձավորարեւելյան լարվածությունն արժեզրկելու է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի նախագահության երկրորդ ժամկետը, եւ նրա պաշտոնավարումն անփառունակ է ավարտվելու: Financial Times պարբերականն իր վերլուծական հոդվածներից մեկում անդրադառնում է այս հարցերին: «Ամենայն հավանականությամբ՝ Թրամփն Իրանի հարցում հասել է իր հնարավորությունների սահմանագծին»,- ասված է հոդվածում՝ մեջբերում կատարելով հանրապետական քաղաքական ստրատեգ Ռոն Բոնժանի խոսքերից: «Ակնհայտ է դառնում, որ հակամարտության կարգավորումը ժամանակատար է լինելու: Կարող են անցնել ամիսներ, գուցե՝ տարիներ, նախքան հակամարտությունը կկարգավորվի»,- ասել է Բոնժանը: Այս իրավիճակում, ըստ նրա, անհասկանալի է մնում, թե ինչպես է ԱՄՆ նախագահը փորձելու ծածկել հակամարտության՝ իրեն եւ ԱՄՆ-ին պատճառած քաղաքական, տնտեսական եւ դիվանագիտական վնասները:

«Դեէսկալացման նպատակով հրահրված էսկալացիան անցյալում էլ որեւէ նշանակալի արդյունքի չէր բերել»,- ենթադրում է Վաշինգտոնի Նոր ամերիկյան անվտանգության կենտրոնի պաշտպանական հարցերով փորձագետ Բեքա Վասերը: Իրանի դեմ, իհարկե, տնտեսական ճնշումը շարունակվում է՝ երկարատեւ խաղի շրջանակում, սակայն գոնե առայժմ դա իրական արդյունքի չի բերել՝ ընդգծում է Վասերը: Պենտագոնի՝ Պարսից ծոցի եւ Արաբական թերակղզու հարցերով նախկին տնօրեն Էլիզաբեթ Դենթի կարծիքով էլ՝ ողջ հակամարտությունը հիմա տեղափոխվել է Հորմուզի նեղուց, եւ այլեւս առաջնային խնդիրները, այն է՝ միջուկային ծրագիրը, բալիստիկ եւ թեւավոր հրթիռների ծրագրերը, մղվել են միջազգային օրակարգից դուրս՝ լուսանցք:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳԻԳԱՆՏԻՑ ԿՄԱԽՔՆ Է ՄՆԱՑԵԼ

1970-ականներին Հրազդան քաղաքում լեռնաքիմիական կոմբինատի հիմքի վրա կառուցվեց «Հրազդանմաշ» գործարանը, որը կոչված էր դառնալու Խորհրդային Միության կարեւորագույն ձեռնարկություններից մեկը՝ մեքենաշինության եւ հաշվողական տեխնիկայի գիտաարտադրական գիգանտ, որի շուրջ հետագայում պետք է ընդլայնվեր Հրազդան քաղաքը: Գործարանն ունեցել է մի քանի ուղղություն՝ հատուկ տեխնիկայի արտադրություն, գյուղտեխնիկայի եւ գործիքաշինական, սպառման ապրանքների եւ անգամ սառնարանների արտադրություն: «Հրազդանմաշը» հսկա գիգանտ էր՝ մինչեւ 1991-1992 թթ. ուներ շուրջ 8 հազար աշխատող:

1998 թ., Ազգային ժողովի որոշմամբ, «Հրազդանմաշը» սեփականաշնորհվել է, որի արդյունքում, ըստ արտադրական մասնաշենքերի, կազմավորվել է մի քանի կազմակերպություն: Այդ տարիներին Հրազդանի հսկան սնանկ ճանաչվեց եւ, ինչպես ժողովուրդն է ասում, թալանվեց: 2001թ. սեպտեմբերի 13-ին կառավարությունը որոշում ընդունեց «Հրազդանմաշ» ԲԲԸ-ի վերակազմակերպման մասին: Հենց նույն թվականին էլ կազմավորվեց «Պատնեշ» ՓԲԸ-ն՝ որպես «Հրազդանմաշի» իրավահաջորդ: Այն գործում է Հայաստանի պաշտպանության նախարարության պատվերով եւ զբաղվում է հատուկ տեխնիկայի նորոգման աշխատանքներով: Այսօր «Պատնեշ» ՓԲԸ-ն գրեթե աշխատակից չունի, քանի որ տասնյակից ավելի աշխատողներն արդեն 2 տարի է՝ աշխատավարձ չեն ստացել: Հույսները կտրած՝ աշխատակիցներից ոմանք դատարան են դիմել՝ չվճարված աշխատավարձի եւ վճարման կետանցված օրերի պարապուրդի համար գումարներ, այդ թվում՝ տույժ-տուգանքների բռնագանձման պահանջներով:

Ինչո՞ւ աշխատակիցներին չեք վճարում իրենց հասանելիք աշխատավարձը՝ հարցրինք «Պատնեշ» ՓԲԸ-ի տնօրեն Անդրանիկ Գեւորգյանին: Նա խուսանավեց՝ ասելով, որ հարմար չէ հարցերին պատասխանելը, հորդորեց այդ հարցով դիմել բարձրտեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն:

Նշենք, որ դեռ 2 տարի առաջ, երբ գործարանում աշխատավարձերի հետ կապված խնդիր կար, նախարար Մխիթար Հայրապետյանն այցելել էր «Պատնեշ» ընկերություն, զրուցել աշխատակիցների հետ, ծանոթացել նրանց մշակած արտադրանքներին եւ արտադրական գործընթացներին, լսել բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները, սակայն այդպես էլ հարցին լուծում չէր տվել:

Մենք հարցում ենք ուղարկել ԲՏԱ նախարարություն, հետաքրքրվելով. «ԲՏԱ նախարարության ենթակայության տակ գտնվող «Պատնեշ» ՓԲԸ-ն ամիսներ շարունակ աշխատակիցներին աշխատավարձ չի վճարել: Ե՞րբ աշխատակիցներին աշխատավարձ կտրվի»: Մեզ պատասխանել են. «ՀՀ կառավարության 2026 թվականի հուլիսի 2-ի N 960-Ա որոշմամբ «Պատնեշ» ՓԲԸ միացման ձեւով վերակազմակերպվել է եւ միացել է «Գառնի-Լեռ Գիտաարտադրական միավորում» ԲԲԸ-ին: Միաժամանակ որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ «Պատնեշ» ՓԲԸ իրավահաջորդը «Գառնի-Լեռ Գիտաարտադրական միավորում» ԲԲԸ-ն է, եւ վերջինիս անցնում են միացած իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան: Միաժամանակ վերազինման գործընթացի իրականացման ընթացքում նախատեսվում է մարել ընկերության պարտավորությունների մի մասը, այդ թվում՝ աշխատավարձի գծով պարտավորությունները»:

Հարցրել էինք նաեւ՝ մեր տեղեկություններով, «Պատնեշ» ՓԲԸ-ն մաս-մաս վաճառվում է, վաճառված տարածքը մաս-մաս ապամոնտաժվում (թալանվում) է գնորդի կողմից: Ի՞նչ ճակատագիր է սպասվում «Պատնեշ» ՓԲԸ-ին՝ լուծարվելո՞ւ է: ««Պատնեշ» ՓԲԸ առքուվաճառքի, այդ թվում՝ մաս-մաս վաճառքի վերաբերյալ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, արդեն իսկ որոշմամբ սահմանված վերակազմակերպման գործընթացով պայմանավորված: Իսկ ինչ վերաբերում է «Պատնեշ» ՓԲԸ լուծարմանը, տեղեկացնում ենք, որ լուծարման մասին խոսք գնալ չի կարող, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները, պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու, մինչդեռ, ինչպես նշված է վերոշարադրյալում, «Պատնեշ» ՓԲԸ գտնվում է վերակազմակերպման գործընթացում, ըստ որի 3-րդ կետի 3-րդ ենթակետի՝ նշված գործընթացը կավարտվի «Պատնեշ» ՓԲԸ գործունեության դադարման պետական գրանցմամբ»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մեքսիկական կինոյի «ոսկեդարը»

Համաշխարհային կինոարվեստում կան անուններ, որոնք դառնում են որոշակի ազգային կինոների կամ ժամանակաշրջանների սիմվոլներ: Այդպիսին է, օրինակ, Արաքսի Բալաբանյանը՝ բրազիլական կինոյում: Այդպիսին է նաեւ Էլսա Ագիրեն՝ մեքսիկական կինոյում, որին կարելի է ամենայն իրավամբ համարել մեքսիկական կինոյի «ոսկեդարի» նահապետուհիներից մեկը: Նրա կինոկարիերան ընդգրկում է ավելի քան կես դար: Նրա ստեղծած էկրանային կերպարները մինչ այսօր շարունակում են ողջ լատինաամերիկյան կինոյում աչքի ընկնել իրենց նրբագեղությամբ՝ աչքի ընկնելով դրամատիկ վարպետությամբ եւ ազգային գեղարվեստական ոճի ընդգծմամբ:

1930-50-ական թվականները, ըստ կինոյի պատմության մասնագետների, համարվում են մեքսիկական կինոյի ոսկեդարը: Մինչ եվրոպական կինոն փորձում էր հաղթահարել երկրորդ աշխարհամարտն ու դրա հետեւանքները, իսկ Հոլիվուդը կենտրոնացած էր ներքին շուկան սպասարկելու վրա, Մեքսիկան Լատինական Ամերիկայում դարձել էր խոշոր իսպանալեզու կինոկենտրոն: Այդ ժամանակ նկարահանվում են համաշխարհային կինոյի դասական գործեր համարվող շատ ժապավեններ: Այդ ժամանակ է, որ ասպարեզում գործում են համաշխարհային կինոյի այնպիսի երեւելի դեմքեր, ինչպիսիք են Պեդրո Ինֆանտեն, Խորխե Նեգրետեն, Մարիա Ֆելիքսը, Դոլորես դել Ռիոն, Սիլվիա Պինալը եւ Էլսա Իրմա Ագիրեն, իհարկե:

1930 թվականին ծնված Ագիրեն կինոյում հայտնվում է պատահաբար, ինչպես գրում են նրա կենսագիրները: Պատանեկան հասակում քրոջ՝ Ալմա Ռոսայի հետ նա մասնակցել է գեղեցկության մրցույթի եւ հաղթել: Հենց դա էլ բացել է նրա ճանապարհը դեպի կինոյի աշխարհ: 1945 թվականին առաջին անգամ նկարահանվել է կինոյում: Երիտասարդ դերասանուհին միանգամից գրավել է ռեժիսորների ուշադրությունն իր ֆոտոգենիկությամբ, բնական պլաստիկայով եւ զարմանալի հանգիստ խաղային մաներայով: Դա տարբերվում էր թատերական էսպրեսիայից, որը հատուկ էր այն ժամանակվա կինոյին: Իր կարիերայի ընթացքում Ագիրեն դառնում է մեքսիկական կինոյի դեմքը, նկարահանվում ավելի քան 40 հայտնի ժապավենում: Դա 1950-ականներին էր, երբ նա հաջողությամբ հանդես է գալիս եւ պատմական կինոնկարներում, եւ ռոմանտիկ մելոդրամաներում, եւ արկածային ու հոգեբանական դրամաներում: Ի տարբերություն իր շատ սերնդակից դերասանուհիների, Ագիրեն միատիպ դերերից խուսափում էր՝ ձգտելով ստեղծել բազմակողմանի կանացի բնավորություններ: Հենց դա էլ նպաստում է, որ նա ունենա երկարատեւ ստեղծագործական կյանք, եւ ասեն, որ, ի դեմս նրա, «մեքսիկական կինոն կանացի դեմք» է ձեռք բերել: Քննադատները հաճախ են նշել, որ Էլսայի գեղեցկությունն ինքնանպատակ չի եղել: Նա կարողացել է արտաքին գրավչությունը զուգորդել կերպարի ներքին հոգեբանական խորքի հետ, եւ դրա շնորհիվ է, որ կերպարները նրա մոտ ստացվել են բնական ու համոզիչ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՎՈՒՇ

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը արցախցիների թաղամաս է կառուցելու

Տավուշի մարզպետարանի տվյալներով, 2023 թվականի աշնանը Տավուշի մարզում բնակություն է հաստատել Արցախից բռնագաղթած 780 ընտանիք, 2 հազար 970 անձ: Տավուշում բնակարան եւ աշխատանք չունենալով՝ նրանց մի մասը հեռացել է մարզից: Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ 2026թ. հունիսի 4-ի դրությամբ Տավուշի մարզում բնակվում է Արցախից բռնի տեղահանված 525 ընտանիք, 1848 անձ: Հունիսի 26-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշում հաստատված արցախցի քանի ընտանիք է հունիսի 26-ի դրությամբ պետական բնակարանային ապահովման ծրագրով Տավուշի մարզում բնակարան ձեռք բերել, մարզի որ համայնքում արցախցի քանի ընտանիք է ապրում»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ հարցի «վերաբերյալ առաջարկում ենք դիմել համապատասխան պետական լիազոր մարմնին»: Թեեւ պարտավոր էին հայտնել, թե որն է այդ խնդրով համապատասխան պետական լիազոր մարմինը, սակայն չեն հայտնել: Իմ տեղեկություններով՝ Տավուշի մարզում հաստատված արցախցիներից մինչեւ հիմա բնակարանային ապահովման պետական ծրագրով բնակարան է ձեռք բերել ընդամենը 10 ընտանիք, որից 5-ը՝ Նոյեմբերյան, 5-ը՝ Իջեւան համայնքում: Այդ առումով կարեւոր է, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը (տնօրեն՝ Առէն Պետրոս Տէյիրմէնճեան, հասցե՝ Երեւան, փ. Բաղրամյան 18) «Տավուշ համայնքային զարգացում» ծրագրի շրջանակում Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ գյուղում նախատեսում է արցախցիների համար կառուցել բնակելի թաղամաս՝ համապատասխան ենթակառուցվածքներով: Բերդի համայնքապետարանը, առաջնորդվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման եւ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշման հավելվածով, նախաձեռնել է հանրային լսում՝ բացահայտելու քաղաքացիների կարծիքը վերոնշյալ թեմայի շուրջ, արձանագրելու շահագրգիռ հանրության առաջարկություններն ու դիտողությունները: Հանրային լսումը կկայանա հուլիսի 28-ին, ժամը 12:00-ին, Բերդի համայնքապետարանում: Նշված է, որ իրականացվելու է սոցիալական ծրագիր, որի նպատակն է՝ աջակցել բռնի տեղահանված հայերին, զարգացնել համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, նպաստել էկոտուրիզմի զարգացմանը: Ըստ առաջարկվող ծրագրի՝ Տավուշ գյուղում կառուցվող թաղամասը բաղկացած է լինելու 8 առանձնատնից, որոնցից յուրաքանչյուրն ունենալու է 10մ X 10մ չափերով մակերես՝ կահավորված ապաստարանով, մենատները կահավորված են լինելու կոմունալ ծառայություններով՝ խմելու ջրամատակարարմամբ, կեղտաջրերի հեռացման համակարգով: Ջեռուցումը եւ տաք ջրի ստացումը նախատեսվում են ամեն տան համար առանձին տեղադրվող գազօջախներով: Թաղամասում կառուցվելու են նաեւ 14մ X 14մ չափերով ռեստորան եւ 8 հատ՝ յուրաքանչյուրը 250 քառակուսի մետր մակերեսով ջերմոց: Այսինքն՝ թաղամասում բնակվող յուրաքանչյուր ընտանիք ունենալու է սեփական ջերմոցը: Ո՞րն է բնակելի թաղամասում ռեստորանի կառուցման նպատակը: Տեղեկություններ կան, որ այդ ռեստորանը նպաստելու է էկոտուրիզմի զարգացմանը, ռեստորանում հրամցվելու են այդ 8 ջերմոցներում աճեցված մթերքները: Պարզ չէ, թե բնակելի թաղամասի կառուցումն ինչու է իրականացվելու Բերդ քաղաքին հարակից Տավուշ գյուղում, ոչ թե, ասենք, Բերդ համայնքի սահմանամերձ գյուղերից մեկում: Այդ հարցի պատասխանը, հավանաբար, կտրվի Բերդում հուլիսի 28-ին կայանալիք հանրային լսումների ժամանակ:



Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Վարշապետը չի ուզում, որ հայկական դրոշը բարձրացնեն

«Օլիմպավանը չեն բացում, բայց երեխաները պետք է մարզվեն, առաջիկայում մրցաշարեր կան»,- Օլիմպավանի բակում լրագրողներին ասել է ՄՄԱ մարտարվեստի մարզիչ **Էրիկ Օհանյանը**, որը դրսում երեխաների հետ պարապմունքներ է անցկացնում:

«107 հոգի են, որից 20-ն է կարողանում գալ, օրինակ, Լենինգրադյանի դահլիճը, մնացածը չեն կարողանում: Ի՞նչ անեմ՝ դադարեցնե՞մ, ասեմ՝ ոչ մի մրցում, ոչ մի բա՞ն: Տատամիներ ենք ճարել, որ երեխաները պարապեն»,- շարունակեց նա: Էրիկ Օհանյանը նշեց, որ լավ սաներ ունեն, լավ արդյունքներ են տալիս, բայց հիմա այս դադարը, միանշանակ, ազդում է երեխաների մարզավիճակի վրա: Դրսում պարապող երեխաներից մեկի ծնողն էլ ասաց. «Երեխաներին հանել-գցել են քուչեքը, մարզվելու տեղ չունեն, հարմարություն չկա, բայց պետք է պատրաստվեն մրցումների: Ի՞նչ է անում այս պետությունը: Ցույց է տալիս, որ ժողովրդի շահերն է պաշտպանում, բայց այդպես չէ: Մարդկանց հետ անձնական հարցեր ունեն, Օլիմպավանն են փակում: Մեկ-երկու օր արել եք ձեր գործերը, դուրս եք եկել, ի՞նչ ձեւականություն է՝ փակել եք Օլիմպավանը: Ինչ որ պետք է գտնեիք, կամ գտել եք, կամ չեք գտել: Այն տպավորությունն է, որ մեր վարչապետը չի ուզում, որ հայկական դրոշը բարձրացնեն այլ երկրներում: Այս երեխաները պետք է գնան այլ երկրներ՝ հայկական դրոշը բարձրացնեն, բայց երեխաները փողոցում են պարապում: Վստահ եմ, որ գալու են՝ այստեղից էլ հանեն»:

Հիշեցնենք, որ մեկ շաբաթից ավելի է, ինչ կապարակնքված են ԲՀԿ առաջնորդ, ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին պատկանող բոլոր ընկերությունները, գործարանները, աշխատակիցները հարկադիր պարապուրդի են մատնված: «Արարատցեմենտ» գործարանը եւ «Մուլտի Վելնես» առողջարարական համալիրի տարածքը պետությունն արդեն խլել է, դադարեցվել է «Շանգրի Լա» խաղատան լիցենզիան՝ իշխանությունը չբավարարվեց Գագիկ Ծառուկյանին խորհրդարան չթողնելով, այլ տոտալ հարձակում է իրականացնում նրա անձի ու սեփականության նկատմամբ:

Կապարակնքված է նաեւ ՀԱՕԿ-ի մարզաբազա հանդիսացող Օլիմպավան կենտրոնի շենքը: Օլիմպավանի տնօրեն **Իշխան Սեդրակյանը** «Հրապարակի» հետ զրույցում իր տարակուսանքը հայտնեց՝ ասելով, որ անցել է 7-օրյա ժամկետը, սակայն իրավապահներն այդպես էլ որեւէ քայլ չեն կատարել՝ համալիրում աշխատանքը վերականգնելու ուղղությամբ. «Ոչ մի տեղաշարժ չկա, երեկ էլի խոսեցինք, որեւէ փոփոխություն չկա: Երեխաները ստիպված դրսերում՝ ասֆալտների վրա են պարապում, մի մասը՝ մեզ մոտ, բակերում, մի մասը՝ Բիձեքի գյոլում: Այնտեղ էլ այնքան շատ են մարդիկ, որ տեղ չկա, երեք-չորս խումբն այնտեղ է մարզվում, մնացածը՝ մեզ մոտ՝ բակերում: Այս պահին մեր բոլոր խմբերը դրսում են մարզվում: 400 երեխայից ավելին ասֆալտի վրա է ստիպված մարզումներ իրականացնում: Խառը վիճակ է: Հավաքականի պարապմունքները փորձում ենք չտապալել, սակայն չգիտեմ, թե մինչեւ երբ այսպես կարող ենք շարունակել»: Իշխան Սեդրակյանն ասում է, որ սպորտի մարդիկ չեն սիրում քաղաքական պրոցեսներին միջամտել, այդ պատճառով Օլիմպավանում շատերը չեն ցանկանում ակցիաներ կազմակերպել, խոսել. «Բարդացել է, մարդիկ մի քիչ ուրիշ կերպ են հարցերին նայում, չեն ուզում խոսել, ի վերջո՝ սա սպորտային կառույց է, մենք երբեք չենք ցանկացել սպորտը խառնել քաղաքականության հետ: Մենք ընդամենը ուզում ենք մեր աշխատանքը շարունակել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՈՐՈՆՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է՝ ԱՎԵԼԻ ՎԱՏԻՆ ԳՏՆԵԼ ՉՀԱՋՈՂՎԵՑ

Հանչուն չկարողացանք ընտրությունների միջոցով ազատվել Նիկոլ Փաշինյանից: Հարցնողը լռեց՝ սպասելով արդեն ծանոթ պատասխաններից մեկին՝ ընտրակեղծիք, վարչական ռեսուրս, պետական քարոզչություն, ընդդիմության թուլություն, արտաքին ճնշումներ...

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Բայց պատասխանն անսպասելի էր. «Որովհետեւ ժողովուրդն ավելի վատին դեռ չի գտել»: Առաջին հայացքից՝ սովորական կատակ է, կծու հեգնանք: Կասեք՝ սեւ հումոր, սրամտություն, ու կսխալվեք: Իրականում այս «անմեղ» նախադասության մեջ խտացված է մի ամբողջ ժամանակաշրջանի քաղաքական նկարագիրը: Հազարավոր էջեր, վերլուծություններ, գիտաժողովներ ու հեռուստաբանավեճեր դժվար թե ասեն այնքան, որքան ասում է այս վեց բառը: Դրանց հետեւում 35 տարվա հիասթափություններն են, սխալները, կոտրված հույսերը, չարդարացված սպասումները եւ նույն տեղը նորից վերադառնալուց փորձն ու վախը:

Այդ նախադասության ամենածանր բառը «վատ»-ը չէ, «դեռ»-ն է: Որովհետեւ դա ոչ թե վերջակետ է, այլ՝ քաղաքական փիլիսոփայություն, միաժամանակ՝ սպառնալիք: Այն կարծես ասում է. «Սրան ընտրեցինք: Բայց որոնումը դեռ շարունակվում է: Գուցե հաջորդ ընտրությանը վերջապես ավելի վատին գտնենք...»: Չի ասում՝ ժողովուրդը լավագույնին չգտավ: Չի ասում նույնիսկ՝ լավին չգտավ: «Լավ» բառը վաղուց արտաքսվել է մեր քաղաքական բառարանից: Այնտեղ չափման միայն մեկ միավոր է մնացել՝ «վատը»: Տարօրինակ մրցույթ է. ո՞վ է ավելի վատը, ո՞վ կհասնի ու կգերազանցի նախորդի նվաճած «բարձունքները»:

Բայց պատասխանն անսպասելի էր. «Որովհետեւ ժողովուրդն ավելի վատին դեռ չի գտել»: Առաջին հայացքից՝ սովորական կատակ է, կծու հեգնանք: Կասեք՝ սեւ հումոր, սրամտություն, ու կսխալվեք: Իրականում այս «անմեղ» նախադասության մեջ խտացված է մի ամբողջ ժամանակաշրջանի քաղաքական նկարագիրը: Հազարավոր էջեր, վերլուծություններ, գիտաժողովներ ու հեռուստաբանավեճեր դժվար թե ասեն այնքան, որքան ասում է այս վեց բառը: Դրանց հետեւում 35 տարվա հիասթափություններն են, սխալները, կոտրված հույսերը, չարդարացված սպասումները եւ նույն տեղը նորից վերադառնալուց փորձն ու վախը:

Ամեն ընտրությունից հետո թվում էր՝ ահա, հասել ենք հնարավոր ամենացածր նշաձողին: Բայց հաջորդ ընտրությունը նորից ապացուցում էր, որ ներքեւում դեռ չբացահայտված «հարկեր» կան: Թվում էր՝ քաղաքականության նկուղն արդեն նվաճված է: Մինչեւ եկավ վերջինը եւ ապացուցեց, որ նույնիսկ նկուղը հատակը չէ: Նա հաստատվեց վերջին նկուղում՝ որպես մշտական բնակիչ: Եվ շատերին համոզեց, որ հենց նկուղն է ամենահարմար բնակարանը: Այդ պահին վեց բառանոց խեղճ ու խելոք թվացող նախադասությունը դադարում է սրամտություն լինելուց եւ վերածվում է դատավճռի: Եթե հավատանք պատասխանին, ապա մեր ժողովուրդը վերջին 35 տարիներին կատարել է իսկապես բացառիկ քաղաքական հայտնագործություն: Առաջին ընտրությանը գտել է վատ ղեկավար: Յուրաքանչյուր հաջորդ ընտրությունից հետո՝ ավելի վատին: Հետո՝ նրանից էլ վատին: Եվ, ի վերջո, հաջողվել է գտնել բոլորից վատին:

Ընդ որում՝ այդ «վատագույնին» ստիպված էր ընտրել երկրորդ ու երրորդ անգամ: Որովհետեւ ավելի վատին դեռ չի գտել: Պարադոքս է, թե՞ աբսուրդ: Կարելի է ասել՝ սեւ հումո՞ր: Բայց ժպիտը կամաց-կամաց քարանում է մեր դեմքին: Եթե ժողովուրդը երեք անգամ անընդմեջ ընտրել է նույն մարդուն միայն այն պատճառով, որ ավելի վատին չի գտել, ապա ստացվում է, որ այսօր ամբողջ Հայաստանը լծված է մի արտառոց գործի՝ փնտրում է մեկին, ով Նիկոլ Փաշինյանից էլ վատը կլինի:

Սա արդեն ոչ թե քաղաքականություն է, այլ ազգային մասշտաբի ֆանտաստիկ կատաստրոֆա: Ասես ամբողջ երկիրը մասնակցում է մի անհավանական մրցույթի, որի միակ պայմանն է՝ գտնել մի մարդու, որը կգերազանցի չգերազանցվածին: Բայց այդ որոնումը, կարծում եմ, դատապարտված է անհաջողության: Որովհետեւ որոշ երեւույթներ բնությունը ստեղծում է միայն մեկ անգամ: Երկրորդ Արարատ չկա: Երկրորդ Նիագարա չկա: Եվ, բարեբախտաբար թե դժբախտաբար, երկրորդ Նիկոլ Փաշինյան էլ չկա: Ոչ միայն Հայաստանում: Նույնիսկ տիեզերքում: Նրան բնութագրելու կարիք էլ չկա: Յուրաքանչյուրը կարող է բացել բացասական մակդիրների ցանկացած բառարան ու խաղալ «գտիր տարբերությունը» խաղը: Այո՝ երկրորդ Նիկոլ Փաշինյան չկա: Այնպես որ, սիրելի՛ ժողովուրդ, փնտրտուքը դադարեցրեք: Նրանից վատը չեք գտնելու: Ստիպված եք լինելու չորրորդ, հինգերորդ, տասներորդ անգամ էլ նույն ընտրության առաջ կանգնել: Մարդն իզուր չէր ասում. «Կամ ես կլինեմ վարչապետ, կամ Հայաստանը վարչապետ չի ունենա»: Ահա թե ինչպես է ծնվում «Նիկոլը հավերժ է» դատավճիռը:

Բայց եթե Նիկոլը հավերժ է, ապա ոչ իր շնորհիվ: Նրա հենարանը սեփական իջեցրած նշաձողն է եւ այդ նշաձողին համակերպված ընտրազանգվածը: Նրա հենարանը համատարած նազարականությունն է: Ահա նիկոլիզմի հավերժության երեք հենասյուները: Մարդիկ կգան ու կգնան: Անունները կփոխվեն: Բայց եթե չբարձրանա նշաձողը, պատմությունը նորից կգրի նույն նախադասությունը. «Որովհետեւ ժողովուրդն ավելի վատին դեռ չէր գտել...»:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 17.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՄԵՐ ԵՐԿՐԻՆ ՆՈՐ ԴԵՄՔ Է ՊԵՏՔ՝ ՀՆԵՐԸ ԳՆԱՆ, ՆՈՐԸ ԳԱ

Այնպես է ստացվել, որ լրագրողները կենտրոնացել են քաղաքական դեմքերի, պետական պաշտոնյաների ու հանրային գործիչների վրա եւ չեն նկատում հասարակ մարդկանց՝ նրանց, ովքեր արդյունք են ստեղծում, ծառայություններ մատուցում, համեստորեն իրենց գործն են անում եւ ավելի լավ են անում, քան քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները:

Շուշան ՍԱՐԻԿՅԱՆ

Մենք որոշել ենք ձեզ ներկայացնել նաեւ այդ մարդկանց, որոնք սովորական կյանքով են ապրում, ունեն իրենց հոգսերն ու մտահոգությունները, որոնք հաճախ հասանելի չեն հանրությանը, որովհետեւ նրանք լրագրողների հերոսները չեն, հարցազրույցներ չեն տալիս, լայվեր չեն անում, եթերից եթեր չեն վազում:

Այսօրվա մեր հերոսը 68 տարեկան **Սուրեն պապն** է: Նա կոշկակար է՝ արդեն ավելի քան 23 տարի իր «ընկերներն ու զրուցակիցները» քաղաքացիների հնամաշ կոշիկներն են, որոնք նա նորոգում է, դարձնում օգտագործման պիտանի, եւ մարդիկ շնորհակալ են դրա համար, որովհետեւ ամեն մեկը չէ, որ կարող է կոշիկը մաշվելուց դեն նետել ու նորը գնել: Նա ասում է, որ ինքը «զագատովշչիկ» է՝ կոշիկի հումք պատրաստող: Աշխատանքի է գալիս առավոտյան ժամը 9:30-ին եւ աշխատում մինչեւ 17:00-ն: Սուրեն պապի կրպակը գտնվում է Սարյան փողոցում, բայց ինքն ապրում է Շինարարների փողոցում: Պատմում է. «Այս գործով եղբայրս էր զբաղվում, ես էլ եկա-գնացի, նայեցի ու ես էլ սկսեցի զբաղվել սրանով: Ռուսաստանում էի աշխատում, հետո հիվանդացա, մի որոշ ժամանակ չաշխատեցի, եկա Հայաստան 2003 թվականին ու մնացի...»:

Ի՞նչ փոփոխություններ կան իր աշխատանքի մեջ՝ հետաքրքրվում ենք մեր զրուցակցից: «Վերջին տարիների համեմատ, գործը մի քիչ կանգնած է: Մի ժամանակ, օրինակ՝ մի 5 տարի առաջ, շատ ավելի լավ էր»,- ասում է նա: Այս կրպակն ինքն է զրոյից ստեղծել, մի անգամ նույնիսկ փորձել են կրպակը քանդել, ասում է՝ Չոռնիի ժամանակ էր, բայց բախտը բերել է՝ քաղաքապետին գործից հանել են ու իր մասին մոռացել, եւ մինչ օրս շարունակում է աշխատել: Շուտով Սուրեն պապը կդառնա 69 տարեկան, իր կյանքի ընթացքում միշտ աշխատել է՝ առանց ջանք խնայելու, պարտաճանաչ ու նվիրված: Նրա համոզմամբ՝ կոշկակարի մասնագիտությունը հենց իր սերնդի մարդկանց գործն է՝ նոր սերնդի մեջ իրենց գործը շարունակողներ չկան: Իսկ ովքե՞ր են իր հաճախորդները: «Մարդիկ կան, որ սկզբից մինչեւ հիմա էլ գալիս են մոտս: Արդեն 18-20 տարի է՝ գալիս են: Դե, 2003 թվականից այստեղ եմ»: Երբեւէ մտածե՞լ է կրպակը տեղափոխելու կամ ավելի մեծ տարածք վարձակալելու՝ կրպակը մեծացնելու մասին: Սուրեն պապը ժպտում է՝ այս տարիքում արդեն դժվար է նման բաների մասին մտածելը: Ասում է՝ այստեղ խաղաղ, հանգիստ է, իրեն բավարարում է ունեցածը, ավելիին չի ձգտում: «Շատ են գալիս, նստում ենք, զրուցում ենք: Մի օր մեկը եկավ, ասեց. գարեջուր բերե՞մ՝ խմենք: Ասեցի՝ ես աշխատում եմ, չեմ եկել նստեմ, քեզ հետ խմեմ»,- ժպիտով պատմում է կոշկակարը: Զրուցեցինք նաեւ մեր երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին, հետաքրքրվեցինք՝ հետեւո՞ւմ է արդյոք քաղաքական իրադարձություններին, հետաքրքրվա՞ծ է: Ասաց. «Հետեւում եմ, բայց աշխատում եմ շատ չխորանալ: Ես միշտ լավատես եմ...»: Հետո երեւի մտածեց, թե երկրի իշխանությունների, ընտրությունների մասին իր կարծիքն ենք ուզում իմանալ, ասաց. «Մեր երկրին նոր դեմք է պետք. հները գնան, նորը գա՝ սրանք էլ կգնան»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am